

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ  
ԷՄԻԳՐԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ  
2002-2005 ԹԹ.

---

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԷՄԻՐԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ 2002-2005 ԹԹ.  
ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Աննա Մինասյան  
Բլանկա Հանչիլովա

© 2005

ԵԱՀԿ և Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ ՀԿ

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Սույն իրապարակման  
բովանդակությունը կարող է օգտագործվել և արտատպվել կրթական և այլ ոչ  
կոմերցիոն նպատակներով, եթե հյուրի ցանկացած նման վերարտադրության  
դեպքում ԵԱՀԿ-ն և Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ ՀԿ-ն նշվում են  
որպես աղբյուր:

ISBN:

Հայերեն տեքստի խմբագրումը Աննա Մինասյանի և Ալինա Պողոսյանի  
Տայագրված է

Սույն իրապարակման մեջ ամփոփված են հեղինակների տեսակետները,  
մեկնաբանություններն ու եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել  
ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի տեսակետների հետ:

Հետազոտությունը և գրքի տպագրությունն իրականացվել է Սիացյալ  
Թագավորության Արտաքին գործերի նախարարության ֆինանսական  
աջակցությամբ:

---

## ՆԱԽԱԲԱՆ

---

Միջազգային միգրացիան բազմաթիվ խնդիրներ է առաջացնում ինչպես միգրանտների, այնպես էլ ելքի և ժամանման երկրների քաղաքացիների համար: Արտերկրից փոխանցված գումարները ուղղակիորեն ազդում են ելքի երկրի տնտեսության վրա: Ի հավելումն, թե՛ ելքի, և թե՛ ժամանման երկրներում փոփոխվում է աշխատանքային շուկան և հասարակական կառուցվածքը:

Հայաստանի համար աշխատանքային միգրացիան կարևոր և, հիմնականում, խնդրահարույց երևույթ է: Հայաստանում այս թեմայով քննարկումների մեծ մասը վերաբերում է Խորհրդային Սիոնիքյան փլուզումից հետո հարյուր հազարավոր հայերի արտագաղթին, երբ նրանք ստիպված էին հեռանալ սեփական երկրից՝ իրենց ընտանիքների համար ապրուստ հայթայթելու նպատակով: Երկրից հեռանալու պատճառները, ինչպես նաև սեփական հայրենիքից հեռու ապրելու իրականությունը, հաճախ իսկապես ցավալի են: Միաժամանակ, աշխատանքային միգրացիան օգնել է հաղթահարել Հայաստանի ճգնաժամային տնտեսական անկումը՝ ապահովելով հազարավոր ընտանիքների ապրուստի միջոցը:

Վերջին տարիներին Հայաստանում գրանցվել է զգալի տնտեսական աճ: Այնուհանդերձ համարվում է, որ երկրի համախառն ներքին արդյունքի մի նշանակալից նաև կապված է արտասահմանից ուղարկված փոխանցումների հետ: Մինչ երկիրը կազմուրվում է, անհրաժեշտություն է ծագել մշակել աշխատանքային շարժապահովող քաղաքականություն, միաժամանակ խթանելով ներքին աշխատանքեր ստեղծելու գործընթացը, որպեսզի վերադառնալու որոշում կայացրածները ունենան այդ հնարավորությունը: Ի լրումն, արտերկրում աշխատելու որոշում կայացրածների համար անհրաժեշտ է մշակել այնպիսի քաղաքականություն, որը կերածիսավորի աշխատանքային և կենսական արժանապատիվ պայմաններ, ինչպես նաև կպաշտպանի մարդու հիմնարար և աշխատանքային իրավունքները: Այս խնդիրները լուծելու համար պահանջվում է ներկայիս իրականության և միտումների

մանրակրկիտ վերլուծություն և աշխատանքային միգրացիայի ու դրա զանազան դրսերումների հանգամանալից պատկերացում:

Թեպետ աշխատանքային միգրացիան Հայաստանում հասնում է նշանակալից չափերի, փաստացի տեղեկությունները վերջին տասնամյակում աշխատանքային միգրացիայի միտումների մասին եղել են չհամակարգված և կցկուր: Առանց որոշակի ուսումնասիրության, կառավարական համապատասխան քաղաքականության մշակումը չափազանց դժվար, իսկ մի շաբթ ոլորտներում գրեթե անհնարին է եղել: Այս իսկ պատճառով, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը ՀՀ կառավարության հետ համատեղ ծեռնարկել է այս ուսումնասիրությունը, որն իրականացվել է Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ ՀԿ-ի կողմից: Կցանկանայինք շնորհակալություն հայտնել Սիացյալ թագավորության Արտաքին գործերի նախարարության՝ տրամադրված ֆինանսական աջակցության համար: Շնորհակալություն ենք հայտնում նաև ԵԱՀԿ/ԺՀՄ-ին՝ սույն իրապարակման մեջ օգտագործված՝ «Աշխատանքային միգրացիան Հայաստանից. գրականության ակնարկ» հետազոտությունը ֆինանսավորելու համար:

Հուսով ենք, որ այս գեկույցը կնպաստի ընդհանուր առմամբ միգրացիայի և մասնավորապես աշխատանքային միգրացիայի որոշակի խնդիրների քննարկմանը, և վերջապես ՀՀ միգրացիոն քաղաքականության վերանայմանը և դրա արդյունավետ կիրառմանը՝ միգրանտների իրավունքների պաշտպանության շեշտադրմամբ:

Բլանկա Հանջլովա, միջազգային  
հարաբերությունների գծով գ.ք.  
ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ

Աննա Սինասյան  
Առաջադեմ սոցիալական  
տեխնոլոգիաներ ՀԿ նախազան

Դեկտեմբեր, 2005 թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b> .....	7
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ..... Տվյալների հավաքագրումը .....	7
Հարցման ընտրանքը .....	7
ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	8
	9
<b>ԳԼՈՒԽ 1. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ</b> .....	10
ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԻՎԸ .....	10
ՍԵՌԱՎԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ .....	11
ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ .....	12
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻճակը .....	13
Տնտեսական ակտիվությունը և գործազրկությունը .....	13
Տնտեսական ակտիվության վրա ազդող գործոնները .....	16
ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԿԱՍՈՒՏԸ .....	20
Կենսամակարդակը .....	20
Տնային տնտեսության եկամուտի աղբյուրները .....	22
Հիմնական եկամուտ վաստակողները .....	24
<b>ԳԼՈՒԽ 2. ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԷՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ</b> .....	25
ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՏԵՍՊՈԾ 2002-2005 ԹԹ .....	25
Հնդիանուր տվյալներ .....	25
ՀՀ մարզերի միգրացիոն ակտիվությունը .....	27
Քաղաքային և գյուղական բնակչության միգրացիոն ակտիվությունը .....	30
ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՔԱՐՏԵԶԸ .....	30
Ուսասատան և ԱՊՀ .....	30
Եվրոպա, Հյուսիսային Ամերիկա և այլ երկրներ .....	32
Ուղևորության երկրի ընտրությունը պայմանավորող գործոնները .....	32
<b>ԳԼՈՒԽ 3. ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ</b> .....	34
ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	34
Միգրանտների սեռատարիքային կազմը .....	34
Ամուսնական կարգավիճակն ու ընտանեկան կապերը .....	37

<i>Միզրանտների կրթությունը</i> .....	38
<i>Միզրանտների մասնագիտությունը</i> .....	39
<i>Աշխատանքային միզրանտի տիպական նկարագիրը</i> .....	40
<i>ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ</i> .....	40
<i>Զրադղածությունը</i> .....	40
<i>Ամսեկան միջին եկամուտը</i> .....	41
<b>ԳԼՈՒԽ 4. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԶՐԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ</b> .....	43
<i>ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ</i> .....	43
<i>ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵԿԱՄՈՒՏԸ</i> .....	
<i>ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՒՄ</i> .....	46
<i>Ուղևորության սեղոնայնությունը և իրական տևողությունը</i> .....	46
<i>Կացության կարգավիճակը</i> .....	47
<i>Զրադղածությունը</i> .....	47
<i>Դրամական փոխանցումներ</i> .....	50
<i>ԱՊԵԼԱԿԵՐՊԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ</i>	
<i>ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՒՄ</i> .....	52
<i>Բնակելի պայմանները</i> .....	52
<i>Հիմնախնմիջները</i> .....	53
<i>Տեղական իշխանությունների և բնակչության վերաբերմունքը</i> .....	53
<i>ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԹՐԱՖԻՔԻՆԳ</i> .....	54
<b>ԳԼՈՒԽ 5. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԶՐԱՑԻԱՅԻ ՊԱՏճԱՌՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ</b> .....	55
<i>ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԶՐԱՑԻԱՅԻ ՊԱՏճԱՌՆԵՐԸ</i> .....	55
<i>ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԶՐԱՑԻԱՅԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ</i> .....	56
<b>ԳԼՈՒԽ 6. ՄԻԶՐԱՑԻՈՆ ՊՈՏԵՆՑԻԱԼԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ</b> .....	58
<i>ՆԵՐՁԻՆ ՄԻԶՐԱՑԻՈՆ ՊՈՏԵՆՑԻԱԼԸ</i> .....	58
<i>ԱՐՏԱՔԻՆ ՄԻԶՐԱՑԻԱՅԻ ՀԱՆԴԵՊ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՄԸ</i> .....	58
<i>Մշտական էմիզրացիայի հանդեպ վերաբերմունքը</i> .....	58
<i>Աշխատանքային էմիզրացիայի հանդեպ վերաբերմունքը</i> .....	60
<i>ԱՐՏԱՔԻՆ ՄԻԶՐԱՑԻՈՆ ՊՈՏԵՆՑԻԱԼԸ</i> .....	61
<i>Աշխատանքային էմիզրացիա .....</i>	61
<i>Մշտական էմիզրացիա .....</i>	62
<b>ԱՄՓՈՓԻՉ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ</b> .....	63

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս բաժինը նպատակ ունի լրեցողիմ ներկայացնել հետազոտության նպատակն ու մերոդարձությունը, ինչպես նաև տվյալների վերլուծության և մեկնարաննամ ընդհանուր նկատառումները:

### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն հետազոտության շրջանակներում օգտագործվում է աշխատանքային միգրացիայի ընդհանուր սահմանումը, այն է՝ միջավետական սահմանի անցում՝ արտերկրում աշխատելու նպատակով:

Վերջին տասնամյակի ընթացքում բազմաթիվ հետազոտական կենտրոններ քանակական և որակական հետազոտություններ են իրականացրել արտաքին միգրացիոն գործընթացների վերաբերյալ: Թեև որոշ ուսումնավրություններում նկարագրվել են աշխատանքային միգրացիայի որոշ ասպեկտներ, այնուամենայնիվ մինչ այժմ երևոյթը համապարփակ վերլուծության չի ենթարկվել:

Այս հետազոտությունը Հայաստանից աշխատանքային էմիգրացիայի առանձնահատկությունների և տարածվածության վերաբերյալ մի շարք հարցերի պատասխաններու փորձ է: Իր տեսակի մեջ առաջինը լինելով՝ հետազոտությունը տալիս է միգրացիոն հոսքերի ընդհանուր պատկերը՝ դրանով իսկ ուրվագծելով հետազա խորը վերլուծության հնարավոր ուղղությունները:

### ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ

ՀՀ բոլոր մարզերն ընգրկող տնային տնտեսությունների ընտրանքային հարցումն իրականացվել է 2005 թ. փետրվարի 8-ից մինչ մարտի 8-ն ընկած ժամանակահատվածում: Անհրաժեշտ տվյալների հավաքման համար օգտագործվել է ստանդարտացված հարցազրույցի մեթոդը: Հետազոտությանը մասնակցել է ընտանիքի գլխավորը կամ նրա մոտ ազգականը:

Հարցաբերքը բաղկացած էր 3 մասից.

1. Տնային տնտեսության և հարցվողի սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը (ներառյալ ընդհանուր հարցեր ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալ-ժողովրդագրական բնութագրի վերաբերյալ, ինչպես նաև զոհի հարցեր աշխատանքային միգրացիայի գործընթացում ընտանիքի անդամների փաստացի և հնարավոր ներգրավվածության մասին)
2. Աշխատանքային միգրացիայի գործընթացը (ներառյալ ուղևորության նախապատրաստման և ուղևորության երկրում միգրանտի ապրելակերպի տարբեր ասպեկտների նկարագրմանն ուղղված հարցեր)

3. Տնային տնտեսությունների վերաբերմունքը (հարցեր, որոնք պարզաբանում են հարցվողների վերաբերմունքն աշխատանքային միգրացիայի պատճառներին և հետևանքներին)

Այն տնային տնտեսությունները, որոնք ներգրավված չեն եղել աշխատանքային միգրացիայի գործընթացում (*ընտանիքի անդամներից ոչ ոք 2002-2005 թթ. աշխատանքի նպատակով արտասահման չի մեկնել*), պատասխանել են միայն հարցարերքի առաջին բաժնին:

### **Հարցման ընտրանքը**

Հարցման առաջին և հիմնական փուլն իրականացվել է պատահական բազմափուլ ընտրանքի մեթոդով: Ընտրանքային համախմբությունն ընդողիկել է 1503 տնային տնտեսություն: Հաշվի առնելով տնային տնտեսությունների ընդհանուր թիվը Հայաստանում (778,667 համաձայն 2001 թ. մարդահամարի տվյալների)՝ ընտրանքի այս ծավալը բույլ է տալիս ապահովել 2,6% սահմանային սխալ՝ 95% վստահության մակարդակի դեպքում:

Թեև ընտրանքի ծավալը բավարար կլիներ հարցման արդյունքները ՀՀ բոլոր տնային տնտեսությունների վրա տարածելու համար, այնուամենայնիվ հնարավոր էր, որ ընտրանքը չընդգրկեր միգրանտ ունեցող տնային տնտեսությունների բավարար բացարձակ քանակ՝ գործընթացի որակական կողմերի վերաբերյալ համոզիչ եզրակացություններ անելու համար: Այդ պատճառով որոշվեց հարցման հիմնական փուլի ավարտից հետո հարցումը շարունակել բացառող ընտրանքով այնքան, մինչև միգրանտ ունեցող ընտանիքների թիվը հասնի 400-450-ի:

Բացառող ընտրանքով հարցումը կատարվել է նոյն՝ պատահական ընտրանքի մեթոդով՝ մի տարբերությամբ. հարցազրուցավարները պետք է բաց քողմերին այն տնային տնտեսությունները, որոնք 2002-2005 թթ. աշխատանքային միգրացիայում ներգրավված չեն եղել: Չսիչ հարցին Ժխտական պատասխան ստանալու դեպքում հարցազրուցավարները շարունակում էին որոնումը մինչ թիրախային տնային տնտեսության ի հայտ գալը:

Հարցումը կարճ ժամանակում և նվազագույն ծախսերով ավարտին հասցնելու համար՝ բացառող հարցումն իրականացվել է Հայաստանի այն մարզերում, որտեղ հարցման հիմնական փուլի արդյունքների համաձայն աշխատանքային միգրանտների տոկոսն ամենաբարձրն էր: Որոշ մարզեր ներառել ենք երկրորդ փուլ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության խորհրդով:

Քանի որ բացառող ընտրանքը չի ապահովում տնային տնտեսությունների ընտրության պատահականությունը, հարցման այս փուլի արդյունքները օգտագործվել են միայն որակական ընդհանրացումներ անելիս, իսկ բոլոր քանակական գնահատականները հիմնված են հիմնական ներկայացուցական ընտրանքի վրա:

## ՈՐՈՉ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարցման արդյունքում ստացված տվյալները ենթարկվել են բազմաչափ քանակական վերլուծության՝ SPSS ծրագրային փաթեթի օգնությամբ:

Արդյունքները համեմատվել են պաշտոնական վիճակագրական տվյալների (այն է 2001 թ. մարդահամարի տվյալների և ՀՀ 2003 և 2004 թթ. վիճակագրական տարեգրերում բերված ցուցանիշների), ինչպես նաև արտաքին միզրացիոն գործընթացների վերաբերյալ իրականացված հետազոտությունների հետ։<sup>1</sup>

Այնուամենայնիվ անհրաժեշտ ենք համարում նշել կատարված համեմատական վերլուծության որոշ սահմանափակումները։ Նախ, ինչպես ասվեց, մինչ օրս աշխատանքային միզրացիայի վերաբերյալ որևէ ընգրկուն հետազոտություն չեր իրականացվել, ուստի ուսումնասիրության արդյունքները համեմատվել են մի շարք տարրեր հետազոտություններից վերցված տվյալների հետ։ Սակայն կարևոր է հաշվի առնել, որ հետազոտություններից յուրաքանչյուրն անցկացվել էր որպուն հետազոտական մեթոդաբանությամբ, ինչը սահմանափակել է համեմատական վերլուծության հնարավորությունները։ Երկրորդ, գոյություն ունեցող տվյալները ժամանակային առումով հետևողական չեն, ինչը սահմանափակում է լրնգիրյուղային վերլուծության հնարավորությունը։ Ինչպես պարզվեց, մի քանի հետազոտություններ անդրադարձել են ժամանակի միևնույն հատվածին, մինչդեռ որոշ տարիների մասին տվյալներն ընդհանրապես բացակայում են։

<sup>1</sup> Որպես աղբյուր օգտագործվել է Ռուբեն Եգանյանի և Նելսոն Շահնազարյանի «Աշխատանքային էմիզրացիան Հայաստանից. գրականության ակնարկ» չիրապարակված աշխատությունը (Երևան, 2004):

## ԳԼՈՒԽ 1. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Այս գլուխում ներկայացվում է հարցված տնային տնտեսությունների ժողովրդագրական կառուցվածքը և սոցիալ-տնտեսական նկարագիրը: Հնարավորության սահմաններում տվյալները համեմատվում են պաշտոնական վիճակագրական տվյալների և նմանատիպ հետազոտությունների արդյունքների հետ՝ ընտրանքի ներկայացուցչականությունը գնահատելու համար:

### ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԻՎԸ

Հետազոտության հիմնական ընտրանքի մեջ ներգրավված 1503 տնային տնտեսությունները բաղկացած էին 6833 անդամներից: Աղյուսակ 1-1-ը նեկայացնում է տնային տնտեսությունների բաժանումն ըստ անդամների թվի և արդյունքների համեմատությունը պաշտոնական վիճակագրական տվյալների հետ:

*Աղյուսակ 1-1 Տնային տնտեսության անդամների թիվը*

Անդամների թիվը	Հիմնական ընտրանք (%)	Վիճակագրություն (%)
1	5.7	11.0
2	11.0	12.8
3-4	32.6	35.2
5-6	36.6	30.5
7 և ավելի	14.1	10.5
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>
<b>Միջինը</b>	<b>4.55</b>	<b>4.11</b>

Միջինների՝ նշված 0,5 տարրերությունը մեր կարծիքով պայմանավորված է երկու հանգամանքներով.


1. Մեկ հոգուց բաղկացած ընտանիքները բավարար կերպով ներկայացված չեն ընտրանքում, քանի որ հարցվողին տանը հանդիպելու հավանականությունը համեմատաբար փոքր է:
2. Հետազոտությունը կատարվել է ձմռանը, երբ գյուղական տնային տնտեսությունները հակված են ընդլայնվելու. սովորաբար առանձին ապրող հարազատները միավորվում են համատեղ տնտեսություն վարելու նպատակով:

<sup>2</sup> Այսուհետ, «Վիճակագրություն»-ը վերաբերում է 2001 թ. մարդահամարի տվյալներին: Երբ հարցման արդյունքները համեմատվում են այլ տվյալների հետ, արդյուրը նշվում է:

Վերջին ենթադրությունը հիմնավորվել է քաղաքային և գյուղական տնային տնտեսությունների համեմատությամբ. քաղաքային վայրերում ընտանիքների անդամների միջին թիվը (4.13) գրեթե նույնական է պաշտոնական վիճակագրական տվյալների հետ (3.95), մինչդեռ գյուղական շրջաններում շեղումը բավականին արտահայտիչ է՝ 5.09 ի հակառակ 4.42-ի:

## ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Չնայած հետազոտության հիմնական ընտրանքի և մարդահամարի տվյալների միջև վերը նշված փոքր տարրերությանը, հարցված տնային տնտեսությունների սեռատարիքային կազմը գրեթե կրկնում է Հայաստանի ողջ բնակչության սեռատարիքային նկարագիրը (տես Գծապատկեր 1-1 և 1-2):



Հարցված տնային տնտեսությունների անդամների բաժանումն ըստ սեռի և տարիքի ներկայացված է Աղյուսակ 1-2-ում:


Աղյուսակ 1-2 Սեռատարիքային կազմը

Տարիք	Մերժ (%)		
	Տղամարդ	Կին	Ընդամենը
0-4	3.0	3.0	6.0
5-9	3.4	3.2	6.6
10-14	4.4	4.1	8.6
15-24	9.5	10.3	19.8
25-34	7.3	6.5	13.7
35-44	6.6	7.5	14.1
45-54	6.3	6.9	13.2
55-64	3.2	3.3	6.5
65 և ավելի	4.6	6.9	11.5
<b>Ընդամենը</b>	<b>48.3</b>	<b>51.7</b>	<b>100.0</b>

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Հարցված տնային տնեսությունների 11 տարեկանից բարձր անդամների մեծամասնությունն ունի միջնակարգ (35.3%) կամ միջնակարգ մասնագիտական կրթություն (19.6%):

15.9 %-ն ունի բարձրագույն կրթություն (այդ թվում 0.3%-ը ունի գիտական աստիճան) և մոտավորապես 1/4-ը չի ավարտել (կամ դեռ չի ավարտել) միջնակարգ դպրոցը (տես Գծապատկեր 1-3):



Այս տվյալները համապատասխանում են առկա վիճակագրական տվյալներին: Համաձայն 2001 թ. մարդահամարի տվյալների, Հայաստանի 11 տարեկանից բարձր բնակչության 34.5%-ն ունի միջնակարգ կրթություն, 19.3%-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթություն, 15.1%-ը՝ բարձրագույն կրթություն և 0.3%-ն ունի գիտական աստիճան:

Ընտրված տնային տնեսություններում տղամարդկանց և կանանց կրթամակարդակն արտացոլում է երկրի

ընդհանուր համամասնությունը. միջնակարգ մասնագիտական կրթություն ունի տղամարդկանց 18.0%-ը, իսկ կանանց՝ 21.0%-ը, տղամարդկանց և կանաց գրեթե հավասար տոկոսն ունի բարձրագույն կրթություն (15.7% և 15.6% համապատասխանաբար) և բերի բարձրագույն կրթություն (2.5% և 2.4%):

Միևնույն ժամանակ մայրաքաղաքի և հանրապետության այլ վայրերի բնակչների միջև այս առումով կա նկատելի և հիմնավոր տարբերություն, որը հստակ պատկերված է Աղյուսակ 1-3-ում:

**Աղյուսակ 1-3 Տնային տնեսության անդամների կրթամակարդակն ըստ բնակավայրի**

Կրթամակարդակ	Երևան (%)	Այլ բնակավայրեր (%)
Չունի տարրական	0.2	1.5
Տարրական	10.2	12.3
Թերի միջնակարգ	9.2	14.7
Սիրիակարգ	24.7	37.7

Կրթամակարդակ	Երևան (%)	Այլ քնակավայրեր (%)
Միջին մասնագիտական	17.1	20.1
Թերի բարձրագույն	3.3	2.3
Բարձրագույն	34.2	11.4
Հետքուհական	1.2	0.1
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>

Ինչպես նշվեց, Երևանի յուրաքանչյուր երրորդ քնակիչ ունի բարձրագույն կրթություն և քաղաքի բնակչության միայն 0.2%-ը չի մասնակցել ֆորմալ կրթական գործընթացին: Մայրաքաղաքի և Հայաստանի այլ քոչանների միջև այս մեծ ճեղվածքը ցավոք դեռևս պայմանավորված է այն հանգամանքով, որ ֆորմալ կրթությունը և հատկապես բարձրագույն ուսումնական հաստատությունները հավասարապես հասանելի չեն բնակչության բոլոր հատվածներին:

## ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻճԱԿԸ

### Տնտեսական ակտիվությունը և գործազրկությունը

Ամենաբարձ վիճակագրական տվյալների համաձայն՝ 2003 թ. վերջի դրությամբ Հայաստանի աշխատանքային ռեսուրսները կազմել են 2,008,400 մարդ<sup>3</sup> (կամ երկրի բնակչության 62.5%-ը):<sup>4</sup> Ընդհանուր աշխատանքային ռեսուրսների մեջ տնտեսապես ակտիվ և ոչ ակտիվ բնակչության մասնաբաժինները գնահատվել են 61.4% և 38.6% համապատասխանաբար:

Տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը ներառել է արտադրությունից կտրված ուսանողներին (7.5%), և տնային տնտեսության մեջ գրաղված աշխատունակ տարիքի բնակչությունը (31.1%):

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍ ասելով պետք է հասկանալ աշխատանքային տարիքի աշխատունակ անձանց, աշխատող քոչակառուներին և աշխատող պատամիներին:

01.01.2004թ. դրույամբ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԲՆԱԿՎՈՂԻԹՅՈՒՆՆ ընդգրկում է 16-62 տարեկան տղամարդկանց և 16-58 տարեկան կանանց:

ՏՆՏԵՍԱՄՊԵՍ ԱԿՏԻՎ է համարվում բնակչության աշխատող և գործազրկ զանգվածը, իսկ ՏՆՏԵՍԱՄՊԵՍ ՈՉ ԱԿՏԻՎ են այն աշխատունակ անձիք, որոնք չեն աշխատում և չեն փնտրում աշխատամբ:

ԳՈՐԾԱԶՈՒՐԿ պետք է համարել աշխատանքային տարիքի այն աշխատունակ անձանց, ովքեր չեն աշխատում, սակայն ակտիվորեն աշխատանք են փնտրում և պատրաստ են անմիջապես գործի անցման:

<sup>3</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2004, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն

<sup>4</sup> Հաշվարկը կատարվել է Հայաստանի մշտական բնակչության թվի հիման վրա, որն ընդգրկում է այն անձանց, ովքեր պաշտոնապես գրանցված են ՀՀ որևէ բնակավայրում: Մշտական բնակչությունը պետք է տարրերել առկա բնակչությունից, որն ընդգրկում է կոնկրետ պահին ՀՀ ում բնակվող անձանց՝ հաշվի առնելով արտաքին էմիգրացիոն և ինմիգրացիոն հոսքերը: 2001թ.-ի մարդահամարի արդյունքների համաձայն՝ ՀՀ մշտական բնակչությունը կազմում է 3,213,011 մարդ, իսկ առկա բնակչությունը՝ 3,002,594 մարդ:

Զբաղված քնակչությունը (նրանք, ովքեր ներգրավված են տնտեսության բոլոր ճյուղերում, ներառյալ գյուղատնտեսության մեջ զբաղվածներին, ձեռներեցներին և ինքնազբաղվածներին) կազմում է տնտեսապես ակտիվ քնակչության 89.9%-ը, իսկ գործազրկության պաշտոնական մակարդակը (գրանցված գործազրկների տոկոսը տնտեսապես ակտիվ քնակչության մեջ) կազմել է 10.1%: Այնուամենայնիվ այս թվերը տարբերվում են հարցման արդյունքում ստացված տվյալներից: Այդուակա 1-4-ում տնտեսական ակտիվության և գործազրկության ստացված ցուցանիշները համեմատվում են պաշտոնական տվյալների հետ:

#### *Աղյուսակ 1-4 Բնակչության տնտեսական ակտիվություն*

Տնտեսական ակտիվություն	Հիմնական ընտրանք, %	Վիճակագրու- թյուն, % (2003) <sup>5</sup>
<b>1. Աշխատանքային ռեսուրսներ</b>	<b>62.3</b>	<b>62.5</b>
<b>2. Տնտեսապես ակտիվ քնակչություն</b>	<b>65.0</b>	<b>61.4</b>
2.1. Տնտեսության ճյուղերում զբաղվածներ	66.7	89.9
2.2. Գործազրկներ	33.3	10.1
Այդ թվում՝ զբանցված գործազրկներ	5.0	10.1
չզբանցված գործազրկներ	28.3	-
<b>3. Տնտեսապես ոչ ակտիվ քնակչություն</b>	<b>35.0</b>	<b>38.6</b>
Այդ թվում՝ արտադրությունից կտրված ուսանողներ	9.6	7.6
տնային տնտեսություններում զբաղված աշխատունակ քնակչություն	25.4	31.0

Ինչպես երևում է, աշխատանքային ռեսուրսների ընդհանուր բաժանումը ակտիվ և ոչ ակտիվ բաղադրիչների նման է պաշտոնական վիճակագրությանը: Դեռ ավելին, ստացված տվյալները ցույց են տալիս տնտեսական ակտիվության դրական միտում 2003 թ.-ի համեմատ, ինչը նշանակում է, որ որոշ մարդիկ, որոնք 2003թ.-ին ոչ ակտիվ էին, ներկայումս կամ աշխատում են կամ աշխատանք են փնտրում:


Այնուամենայնիվ, զբաղվածների և գործազրկների հարաբերակցությունը տնտեսապես ակտիվ քնակչության մեջ զգալիորեն տարբերվում է Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) զնահատումներից: Նման արդյունքը միանգամայն բացատրելի է, քանի որ *առ գործազրկության պաշտոնական մակարդակը հաշվարկվում է, իմնվելով միայն գրանցված գործազրկություն*

<sup>5</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2004, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն

թվի վրա, և *p*) անցած մի քանի տարիների ընթացքում տարբեր կազմակերպությունների կատարած հետազոտությունների արդյունքները վկայում են այն մասին, որ գործազրկության իրական մակարդակը առնվազն 3 անգամ ավելի բարձր է, քան հրապարակվածը, և որ ՀՀ յուրաքանչյուր երրորդ աշխատունակ քաղաքացի զբաղված չէ որևէ եկամտաբեր գործունեությամբ:Ավելին, այս գնահատականն արտացոլվել է նաև 2003 թ. ԱՎԾ կողմից կատարված՝ տնային տնտեսությունների հարցման արդյունքների մեջ, ըստ որոնց Հայաստանի տնտեսապես ակտիվ բնակչության 33.3%-ը գործազորվ է:<sup>6</sup>

Չնայած, ԱՎԾ-ի 2003 և 2002 թթ.-ի տնային տնտեսությունների հարցման արդյունքների համադրությունը փաստում է աշխատանքի շուկայում փոքր, բայց խստումնալից զարգացման մասին, մեր հետազոտությունը ցավոք ցույց է տալիս, որ իրադրությունը 2003 թ.-ից ի վեր չի բարելավվել:

Ըստ հարցման արդյունքների, զբաղված բնակչության մեծամասնությունը վարձու աշխատողներ են (57%)՝ բյուջետային (37%) կամ մասնավոր հաստատություններում (20%), 1.6%-ը գործատուներ են, և 40.7%-ը ինքնազբաղվածներ են, ներառյալ գյուղատնտեսության մեջ զբաղվածներին (24.1%): Նմանատիպ բաշխման մասին տեղեկացրել է նաև ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը 2003 թ.: Համաձայն վերջինիս իրականացրած տնային տնտեսությունների զանգվածային հարցման արդյունքների՝ ՀՀ զբաղված բնակչության 58.3%-ը վարձու աշխատողներ էին, 40.6%-ը ինքնազբաղվածներ և 1.1%-ը՝ գործատուներ:<sup>7</sup>



<sup>6</sup> Սոցիալ-տնտեսական իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում 2003 թ. հունվարից դեկտեմբերը. ինֆորմացիա-վերլուծական հաշվետվություն, Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2004, էջ 114 (աղյուրը՝ Ռ. Եղանյան, Ն. Շահնազարյան, «Աշխատանքային էմիգրացիան Հայաստանից. զրականության ակնարկ», Երևան, 2004)


<sup>7</sup> Կրբությունը, աղքատությունը և տնտեսական ակտիվությունը Հայաստանում, ՄԱԶԾ Երևան, 2003, էջ 67 (աղյուրը՝ Ռ. Եղանյան, Ն. Շահնազարյան, «Աշխատանքային էմիգրացիան Հայաստանից. զրականության ակնարկ», Երևան, 2004)

## **Տնտեսական ակտիվության վրա ազդող գործոնները**

Հարցման արդյուքների հիման վրա դուրս են բերվել կարևոր կապեր՝ տնտեսական ակտիվության և որոշ օբյեկտիվ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիների միջև, ինչպիսիք են սեռը, տարիքը, կրթությունը և բնակության վայրը: Թեև այս փոփոխականների միջև կապը քննարկվել է նմանատիպ այլ հետազոտական աշխատանքներում, մենք համառոտ կներկայացնենք սույն հարցման մեջ արտացոլված թարմ տվյալները:

### **Սեռը և տարիքը**

Բոլոր գործոնների շարքում **սեռը** տնտեսական ակտիվության վրա ունի առավել ակնհայտ ազդեցությունը: Համաձայն հարցման արդյունքների՝ աշխատունակ տարիքի տնտեսապես ակտիվ բնակչության 63.8%-ը տղամարդիկ են և միայն 36.2%-ը՝ կանայք: Ավելին, տնտեսապես ակտիվ տղամարդկանց 70.4%-ը զբաղված է եկամտաբեր գործունեությամբ, իսկ կանանց զբաղվածության մակարդակը 1.2 անգամ ցածր է (տես գծապատկեր 1-5 և 1-6):



Գործազրկության իրական մակարդակի վերաբերյալ նման տվյալներ է արձանագրել նաև ԱՎԾ-ը 2003 թ.-ին. տնային տնտեսությունների ընտրանքային հարցումը փաստել է, որ գործազրկ է տնտեսապես ակտիվ կանանց 40.2%-ը, իսկ տղամարդկանց՝ 27.1%-ը:

**Տարիքը** զբաղվածության վրա զգալի ազդեցություն ունեցող մեկ այլ գործոն է: Սույն ուսումնակրության արդյունքները համահունչ են այլ հետազոտական աշխատանքների արդյունքներին՝ տարիքից կախված՝ տնտեսական ակտիվության փոփոխությունները պատկերելու առումով: Այսպես, լսու հարցման արդյունքների, տնտեսապես ակտիվ բնակչության մասնաբաժինն ամենաբարձրն է 35-44 և 45-54 տարիքային խմբերում, իսկ ամենացածրը՝ 15-24 և 65-ից բարձր սահմանային տարիքային խմբերում:

Միևնույն ժամանակ գործազրկության մակարդակը հասնում է իր վերին սահմանին ամենաերիտասարդ խմբում և ունի ամենացածր գնահատականը 65-ից բարձր տարիքային խմբում: Այնուամենայնիվ, նշված միտումը

հավասարապես չի վերաբերում տղամարդկանց և կանանց: Աղյուսակ 1-5-ում բերված են 3 փոփոխականների համադրության արդյունքները:

#### *Աղյուսակ 1-5 Մեռլ, տարիքը և տնտեսական ակտիվությունը*

Տնտեսական ակտիվություն	Տղամարդիկ							Կանայք						
	15-24	25-34	35-44	45-54	55-64	65+	Ընդամենը	15-24	25-34	35-44	45-54	55-64	65+	Ընդամենը
Տնտեսապես ակտիվ	53.5	97.1	98.9	96.3	79.5	8.8	85.1	32.5	45.1	53.4	55.1	36.8	2.4	46.0
Չքաղաքացի	48.3	67.2	79.6	78.6	72.4	92.6	70.4	28.9	58.8	69.9	67.6	72.8	81.8	59.1
Գործազրուկ	51.7	32.8	20.4	21.4	27.6	7.4	29.6	71.1	41.2	30.1	32.4	27.2	18.2	40.9
Տնտեսապես ոչ ակտիվ	46.5	2.9	1.1	3.7	20.5	91.2	14.9	67.5	54.9	46.6	44.9	63.2	97.6	54.0


Աղյուսակը ցույց է տալիս տղամարդկանց և կանանց տնտեսական ակտիվության հետևյալ յուրահատկությունները.

- Եթե տղամարդկանց տնտեսապես ամենաակտիվ տարիքային խումբը 35-44-ն է, ապա կանանց դեպքում տնտեսական ակտիվության ամենաբարձր ցուցանիշը նկատվում է 45-54 տարիքային խմբում:
- Եթե յուրաքանչյուր երկրորդ 15-24 տարեկան տնտեսապես ակտիվ տղամարդը աշխատում է, ապա նոյն տարիքի կանանց միայն 32.5%-ն է ներառված եկամտաբեր գործունեության մեջ:
- Այնուամենայնիվ, կանանց զբաղվածության մակարդակն աճում է տարիքին համընթաց, իսկ զբաղված տղամարդկանց տոկոսը նվազում է 45 տարեկանից հետո:
- Վերջին միտումն իր գաղաքնակետին է հասնում 55-64 տարիքային խմբում, եթե զբաղված և գործազրուկ տղամարդկանց ու կանանց տոկոսային հարաբերությունը հավասարվում է:

#### **Կրթությունը**


Կայուն դրական կախվածություն է նկատվել բնակչության կրթամակարդակի և տնտեսական ակտիվության միջև: Բացի այդ, կրթությունն ակնհայտութեն ազդում է զբաղվածության վրա. որքան բարձր է կրթամակարդակը, այնքան ցածր է գործազրկության տոկոսը: Գծապատկեր 1-7-ը ցույց է տալիս, որ բարձրագույն կրթություն ունեցողների խմբում զբաղվածների և գործազրկութերի հարաբերակցությունը 2.7:1 է, իսկ միջին մասնագիտական կրթությամբ մարդկանց խմբում՝ 2.6:1: Վերոնշյալը համեմատելով 1:1-ի հարաբերության հետ միջնակարգ կրթության դեպքում և 0.8:1-ի հարաբերության

հետ միջնակարգից ցածր կրթամակարդակով անձանց դեպքում, կարող ենք հավաստել, որ մասնագիտական կրթությամբ մարդիկ ակնհայտորեն ապրուստ հայրայելու ավելի մեծ հնարավորություն ունեն: Այնուամենայնիվ, մտահոգիչ է մնում այն փաստը, որ բարձրագույն կրթությամբ յուրաքանչյուր չորրորդ անձ չի կարողանում աշխատանք գտնել:



## Քնակության վայրը

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ տնտեսական ակտիվությունը կախված է նաև բնակավայրի տիպից: Այսպես, քաղաքային բնակչությունը հակված է դրսնորել ավելի բարձր տնտեսական ակտիվություն, քան գյուղական բնակչությունը, սակայն քաղաքային բնակավայրերի տնտեսապես ակտիվ բնակչության մեջ գործազուրկների տոկոսը 1.6 անգամ ավելի բարձր է:



Այս արդյունքները միանգամայն տրամաբանական են, քանի որ գյուղական բնակչությունը հնարավորություն ունի զբաղվել գյուղատնտեսությամբ որպես այլընտրանքային եկամտաբեր գործունեություն, որը մեծ մասամբ կախում չունի աշխատաշուկայում տիրող իրավիճակից: Մյուս կողմից, տնտեսական ավելի ցածր ակտիվությունը հավանաբար պայմանավորված է հարցվողների սուբյեկտիվ ընկալմամբ. գյուղական բնակչությունը հաճախ հողագործությունը և անասնապահությունը դիտարկում է որպես իր կենցաղի մի մաս, այլ ոչ թե տնտեսական գործունեություն:<sup>8</sup>

Մենք հնարավորություն ունեինք համեմատելու քաղաքային բնակչության զբաղվածության վերաբերյալ տվյալները 2002 թ.-ին ԱՎԾ-ի հրապարակած ինֆորմացիայի հետ: Թեև տնտեսական ակտիվության 20% աճ է նկատվում, զբաղվածության առումով դրությունը չի բարելավվել. ԱՎԾ-ի հետազոտության տվյալներով, քաղաքային բնակչության 24%-ը 2002 թ. դրությամբ գործազրկություն:

Հաջու առնելով այն տարածված ստերեոտիպը, որ Երևանը Հայաստանի տնտեսական ակտիվության կենտրոնն է և բնակչության կենսամակարդակով էապես տարրերվում է այլ բնակավայրերից, հետաքրքիր էր ստանալ Երևանի բնակչության զբաղվածության իրական պատկերը՝ մնացած 10 մարզերի ցուցանիշների հետ համեմատելու համար: Աղյուսակ 1-6-ը ամփոփում է այդ համեմատության արդյունքները:

#### *Աղյուսակ 1-6 Տնտեսական ակտիվությունը և բնակավայրը*

Տնտեսական ակտիվություն	Երևան	Այլ բնակավայրեր
Տնտեսապես ակտիվ	64.3	65.1
Այդ թվում՝ զբաղված	69.7	65.8
գործազրկություն	30.3	34.2
Տնտեսապես ոչ ակտիվ	35.7	34.9

Ինչպես երևում է, տնտեսական ակտիվության և զբաղվածության ցուցանիշներն այնքան էլ չեն տարբերվում: Միակ նկատելի տարբերությունն այն է, որ Երևանում գործազրկության մակարդակը 3.9%-ով ցածր է:

Բնակչության տնտեսական ակտիվության քննարկումը եզրափակելով՝ ավելացնենք, որ հետազոտության արդյունքների համաձայն Հայաստանի տնտեսապես ամենաակտիվ մարզերն են Շիրակը և Լոռին, տնտեսական

<sup>8</sup> Նման ընկալման մասին են վկայում նաև վերջին երկու տարիների ընթացքում «Առաջադիմ սոցիալական տեխնոլոգիաներ» կազմակերպության իրականացրած մի շարք այլ հետազոտությունների արդյունքները (տե՛ս «Գեղարքունիքի մարզի Վարդենիսի և Շամբարավի շրջանների սոցիալ-տնտեսական իրավիճակը և ցարգացման հեռանկարները», Երևան 2005, «Արմավիրի մարզի Քարավերտ գյուղի սոցիալ-տնտեսական պայմանները», Երևան, 2005):

<sup>9</sup> Աշխատուժը ՀՀ քաղաքային բնակավայրերում, Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2002, էջ 22-23 (աղբյուր՝ Ռ. Եղանյան, Ն. Չահնազարյան, «Աշխատանքային էմիգրացիան Հայաստանից. գրականության ակնարկ», Երևան, 2004)

ակտիվության միջին ցուցանիշներ են գրանցվել Արագածոտնում, Կոտայքում, Գեղարքունիքում, Արարատում և Արմավիրում, իսկ ամենացածր ցուցանիշները՝ Վայոց Ձորում, Սյունիքում և Տավուշում: Մինչույն ժամանակ գործազրկության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Արագածոտնի, Լոռու և Արարատի մարզերում, իսկ ամենացածրը՝ Վայոց Ձորի, Սյունիքի և Տավուշի մարզերում: Այսուակ 1-7-ը պարունակում է բոլոր մարզերի բնակչության տնտեսական ակտիվության և գրադադարթյան վերաբերյալ տվյալները:

#### *Աղյուսակ 1-7 Տնտեսական ակտիվության մարզային ցուցանիշները*


Մարզ	Տնտեսական ակտիվություն	
	Ակտիվ	Զբաղված
Շիրակ	74.7	75.8
Լոռի	71.7	48.9
Արագածոտն	64.5	35.8
Երևան	64.3	69.7
Կոտայք	63.3	70.3
Գեղարքունիք	62.9	73.2
Արարատ	62.2	53.6
Արմավիր	61.7	74.8
Սյունիք	60.6	91.2
Տավուշ	59.1	83.6
Վայոց Ձոր	55.8	92.5

#### *ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏԸ*

##### *Կենսամակարդակը*

Հաշվի առնելով հարցվողների հակվածությունը խուսափել տնային տնտեսության եկամուտի մասին օբյեկտիվ ինֆորմացիա տալուց՝ մենք հատուկ անտեսել ենք ընտանիքի բյուջեի քանակական գնահատման վերաբերյալ հարցերը՝ փոխարենը փորձելով ստանալ տնային տնտեսության կենսամակարդակի վերաբերյալ հարցողի սուրյեկտիվ

*Գծապատկեր 1-9 Կենսամակարդակը*



ընկալումը: Պարզվեց, որ հարցվողների կեսից փոքր-ինչ ավելին (50.5%) իրենց դասում են միջին կամ միջինից բարձր կենսամակարդակ ունեցողների խմբին: Այնուամենայնիվ, մոտավորապես յուրաքանչյուր երկրորդ հարցվող կարծում է, որ իր ընտանիքը կամ աղքատ է, կամ էլ պատկանում է միջինից ցածր եկամուս ունեցող ընտանիքների թվին:

Բնակչության տարրեր խմբերի կենսամակարդակը համեմատելու համար օգտվենք 1-ից 5 բալանոց գնահատման սանդղակից, որտեղ 1-ը ներկայացնում է ամենացածր կենսամակարդակը, իսկ 5-ը՝ ամենաբարձրը: Այսպիսով, ամբողջ ընտրանքի համար կենսամակարդակի միջին գնահատականը հավասար է 2.32, այսինքն մոտ է միջինից ցածր կատեգորիային: Այս թիվը համարելով համեմատության առանցք՝ գնահատենք ՀՀ մարզերի բնակչության միջին կենսամակարդակը:


#### *Աղյուսակ 1-8 Բնակչության կենսամակարդակը << տարրեր մարզերում*

Կենսա-մակարդակ	Մարզ	Միջին
Միջինից բարձր	Արարատ	2.72
	Սյունիք	2.67
	Արմավիր	2.51
	Կոտայք	2.44
	Վայոց Ձոր	2.38
	Երևան	2.35
<b>Երկրի միջինը</b>		<b>2.32</b>
Միջինից ցածր	Արագածոտն	2.28
	Լոռի	2.23
	Շիրակ	2.22
	Տավուշ	2.22
	Գեղարքունիք	2.16

Հարկ է մեկ անգամ ևս նշել, որ այս գնահատականները հիմնված են հարցվողների ընկալման, այլ ոչ թե բնակչության ապրելակերպի օբյեկտիվ գնահատման վրա: Այդ իսկ պատճառով որոշ դեպքերում գնահատականները համապատասխանում են Հայաստանի իրականությանը (ինչպես օրինակ Գեղարքունիքի, Տավուշի և աղեստի գոտու (Շիրակ, Լոռի) դեպքում), մինչդեռ այլ դեպքերում հեռու են օբյեկտիվ լինելուց: Վերջինս հատկապես վերաբերում է Երևանին, որը մեր սանդղակով հազիվ է անցնում երկրի միջին կենսամակարդակի սահմանը՝ բավականին ետ մնալով Արարատից և Սյունիքից: Մեր կարծիքով նման արդյունքը պայմանավորված է հարաբերական դեպքիվացիայի երևույթով. տնային տնտեսության կենսամակարդակը գնահատելիս՝ հարցվողներն այն փորձում են համեմատել բարեկեցիկ կյանքի

որոշակի ընդունված ստանդարտի հետ, որը Երևանում անկասկած ավելի բարձր է, քան երկրի մյուս շրջաններում:

Միևնույն ժամանակ, որքան էլ գնահատականները սուբյեկտիվ լինեն, հետաքրքիր է ուսումնասիրել դրանց կապը տնտեսական ակտիվության վերը քննարկված ցուցանիշների հետ: Պարզվում է, որ կենսամակարդակի ցածր ցուցանիշը ունեցող մարզերը տնտեսապես ավելի ակտիվ են, սակայն գործազրկության մակարդակն այստեղ ավելի բարձր է: Գծապատկեր 1-10-ը ցույց է տալիս, որ այն շրջաններում, որը բնակչության կենսամակարդակը գնահատված է միջինից ավելի բարձր, տնտեսական ակտիվությունը միջինում 5%-ով ցածր է, մինչդեռ զբաղվածության միջին մակարդակը մոտավորապես 1.2 անգամ բարձր է:



Թեև սա կուպիտ ընդհանրացում է, այնուամենայնիվ այն օգնում է բացատրել հարցողների գնահատականները իրենց կենսամակարդակի վերաբերյալ: Այս խաստով հարկ է նկատել, որ համաձայն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կատարած գնահատման, գործազրկությունը շրջանում աղքատ և ծայրահեռ աղքատ բնակչության մասնաբաժնը 1.4 անգամ ավելի մեծ է, քան զբաղված բնակչության տարբեր խմբերում:<sup>10</sup>

### **Տնային տնտեսության եկամուտի աղբյուրները**

Բնակչության տնտեսական իրավիճակի հետագա ուսումնասիրության համար դիտարկենք տնային տնտեսության եկամուտի հիմնական և լրացուցիչ աղբյուրները:

Պարզվում է, որ ՀՀ տնային տնտեսությունների եկամուտի երեք **հիմնական աղբյուրներն են** աշխատավարձը (46.3%), քոշակն ու նպաստները (20.3%), և

<sup>10</sup> Կորուրյունը, աղքատությունը և տնտեսական ակտիվությունը Հայաստանում, ՄԱԶԾ Երևան, 2003, էջ 69 (աղբյուր՝ Ռ. Եղանյան, Ն. Չահնազարյան, «Աշխատանքային էմիգրացիան Հայաստանից. զրականության ակնարկ», Երևան, 2004)

տնամերձ հողատարածքի մշակումը (18.4%): Ընտանիքների 4.5%-ի պնդմամբ իրենց տնային տնտեսության եկամուտի հիմնական մասը կազմում են արտասահմանում բնակող ազգականների դրամական փոխանցումները: Եկամուտի այլ հիմնական աղբյուրների շարքում հարցվողները նշել են գյուղատնտեսությունը, փոքր բիզնեսը և հայատանարնակ հարազատների և ընկերների օգնությունը (ընդհանուր առմամբ 10.6%):

Աղյուսակ 1-9-ը ցոյց է տալիս, թե ինչպես է տնային տնտեսության կենսամակարդակը փոխվում կախված եկամուտի հիմնական աղբյուրից:

**Աղյուսակ 1-9 Տնային տնտեսության կենսամակարդակը և եկամուտի հիմնական աղբյուրը**

Կենսա-մակարդակ	Եկամուտի հիմնական աղբյուրը	Միջին
Աղյուսակ 1-9-ը ցոյց է տալիս, թե ինչպես է տնային տնտեսության կենսամակարդակը փոխվում կախված եկամուտի հիմնական աղբյուրից:	Փոքր բիզնես	2.62
	Տնամերձ հողատարածքի մշակում	2.60
	Աշխատավարձ	2.57
	Փոխանցումներ արտասահմանից	2.42
	Գյուղատնտեսություն	2.41
	<b>Երկրի միջինը</b>	<b>2.32</b>
Սովորական ցածր	Հայաստանարնակ հարազատներից օգնություն	1.92
	Թոշակ, նպաստ	1.81


Ինչ վերաբերում է տնային տնտեսությունների եկամուտի **լրացուցիչ աղբյուրներին**, ապա ամենահաճախը նշվել են քոշակն ու նպաստները (50.9%) և գյուղատնտեսական տարաբնույթ գործունեությունը (42.3%): Արտասահմանից փոխանցումներն այստեղ արդեն երրորդ տեղն են զրահեցնում (10.7%):<sup>11</sup> Մի քանի քայլ առաջ անցնելով՝ փաստենք, որ համաձայն հարցման արդյունքների, արտասահմանից փոխանցումները եկամուտի հիմնական կամ որոշակի մասն են կազմում տնային տնտեսությունների 15.2%-ի դեպքում:

<sup>11</sup> Այսուհետ, եթե տոկոսների գումարը մեծ է 100-ից, նշանակում է հարցին ընդունվում են բազմակի պատասխաններ:

## **Հիմնական եկամուտ վաստակողները**

Հարցվողներին խնդրել էինք նվազման կարգով դասակարգել իրենց տնային տնտեսության անդամներին՝ ըստ վերջիններիս կողմից ընտանեկան բյուջե ներդրված արժեքի նվազման:

Ինչպես և սպասվում էր, առաջին տեղում հայտնվածների մեծամասնությունը տղամարդկան էն (70.5%): Այնուամենայնիվ, գրեթե նույն հարաբերությամբ երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցնում են կանայք:



Այս առումով ամենագործունյա տարիքային խումբը 35-54-ն է. ամենաշատ եկամուտ վաստակողների մեծամասնությունը (տղամարդկանց 52.2%-ը և կանաց 39.6%-ը) պատկանում է այս խմբին: Միաժամանակ այս խմբի տղամարդկանց միջին տարիքը 45 է, իսկ կանացն միջին տարիքը 53: Եկամուտ վաստակողների երկրորդ խմբի տղամարդկանց և կանացն տարիքային կառուցվածքը բավականին տարբեր է. տղամարդկանց մեծամասնությունը 35 տարեկանից երիտասարդ է, մինչդեռ կանացն մեծամասնությունը 45 տարեկանից բարձր է:

Ինչ վերաբերում է եկամուտ վաստակողների սոցիալ-տնտեսական կարգավիճակին, ապա ընտանեկան բյուջեն ամենամեծ ներդրումն ունեցողների մեծամասնությունը (63.3%) վարձու աշխատողներ են, գյուղատնտեսներ և ինքնազբաղվածներ, մինչդեռ երկրորդ և երրորդ խմբերում ներկայացված են հիմնականում բոշակառուները:

Ընդհանրացնելով և լրացնելով ասենք, որ Հայաստանի տնային տնտեսությունների եկամուտի մեծ մասը ստեղծում են 35-54 տարեկան զբաղված տղամարդիկ, որոնք ունեն միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն:


## ԳԼՈՒԽ 2. ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԷՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Այս գլխում նեկայացնում ենք 2002-2005 թթ. ժամանակահատվածում աշխատանքային միգրացիայի տեսապի զնահատականները, ինչպես նաև որվագծում աշխատանքային միգրացիայի քարտեզը՝ Հայաստանում միգրանտների բնակության վայրը և ճրանց ուղղորդության երկրները:

### ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՏԵՍՊՈԾ 2002-2005 ԹԹ.

#### Հնդիանուր տվյալներ

Հարցման արդյունքների համաձայն, 2002-2005 թթ. աշխատանքային միգրացիայի գործընթացում ներգրավված է եղել 209 ընտանիք (կամ հարցման հիմնական ընտրանքի 13.9%-ը): Եթե տարածենք այս տվյալը ՀՀ 778,667 տնային տնտեսու-




թյունների վրա (95% վստահության մակարդակով և 1.7% հաշվարկված սահմանային սխալով), կարող ենք գնահատել այն տնային տնտեսությունների քանակը, որոնք քննարկվող ժամանակահատվածում մասնակցել են աշխատանքային միգրացիայի գործընթացին: Դրանց քացարձակ թիվը կազմում է 95,000-122,000 կամ ընդհանուր տնային տնտեսությունների 12.2-15.6%-ը:

Դեպքերի ճնշող մեծամասնությունում (78%) ընտանիքի անդամներից միայն մեկն է մեկնել արտասահման աշխատելու: Ընտանիքների 15.4%-ը ունեցել է 2 աշխատանքային միգրանտ և միայն 6.6%-ն ուներ 3 կամ ավելի միգրանտ:

Ընդհանուր առմամբ հետազոտության տվյալներով, հարցված տնային տնտեսությունների 6833 անդամներից աշխատանքային միգրանտ էին 280-ը (4.1%): Սա թույլ է տալիս մոտարկել վերջին երեք տարիների ընթացքում Հայաստանից մեկնած աշխատանքային միգրանտների քացարձակ թիվը՝ 116,000 – 147,000 մարդ կամ ՀՀ մշտական բնակչության 3.6-4.6%-ը (հաշվարկված սահմանային սխալը կազմել է 0.5%): Այլ կերպ ասած, 2002-2005 թթ. աշխատանքային միգրացիայի գործընթացում ներգրավված էր Հայաստանի տնտեսապես ակտիվ բնակչության 7.3 - 9.2 %-ը:

Դիտարկվող ժամանակահատվածում՝ հարցված միգրանտների կեսը կատարել է մեկ աշխատանքային ուղևորություն, յուրաքանչյուր չորրորդ միգրանտը երկու ուղևորություն, իսկ մնացած 1/4-ը՝ երեք և ավելի ուղևորություն։ Ըստ հարցման արդյունքների, աշխատանքային միգրանտների 63.4%-ը (178 հոգի) արդեն վերադարձել է Հայաստան և միգրացիայի բացասական սալդոն հարցման պահին կազմում էր 102 մարդ։<sup>12</sup> Տարածելով այս տվյալները ընդհանուր բնակչության վրա, կարելի է ասել, որ անցած երեք տարիների ընթացքում Հայաստանից մեկնած միգրանտներից 73,500-93,000-ը պետք է 2005 թ. վետրվարի դրությամբ վերադարձած լինեին և 42,500-53,800-ը պետք է դեռ գտնվեին արտերկրությունում։

Հարցված միգրանտների մեծամասնությունն առաջին աշխատանքային ուղևորությունը կատարել է 2002 կամ 2004 թ.-ին։ Գծապատկեր 2-2-ում պատկերված է աշխատանքային միգրացիայի գործընթաց նոր մասնակիցների ներառման դիմամիկան։



Այնուամենայնիվ, մենք կցանկանայինք շեշտել, որ այս պատկերի հիման վրա աշխատանքային միգրացիայի տեմպի փոփոխման վերաբերյալ որևէ եզրակացություն անել չի կարելի։ Այս վերապահումն արվում է այն պատճառով, որ մեր ընտրանքում չի ընդգրկվել տնային տնտեսությունների մի ստվար զանգված, որոնք նախկինում ներգրավված են եղել աշխատանքային միգրացիայում, իսկ հիմա մշտապես բնակվում են արտասահմանում։

<sup>12</sup> Նշենք նաև, որ ստացված պատասխանների համաձայն 2005թ.-ին Հայաստան կվերադառնա ևս 34 միգրանտ։

Ավելին, մեր հետազոտության արդյունքները թույլ են տալիս ենթադրել, որ աշխատանքային միգրացիայի տեմպն իրականում նվազել է՝ համեմատած 2001-2002 թվականների հետ։ ԱՎԾ-ի կողմից 2001 թ. փետրվարից մինչ 2002 թ. փետրվարը ընկած ժամանակատվածում կատարված՝ ուղևորների հոսքի ընտրանքային ուսումնասիրությունը աշխատանքային միգրացիայի գծով արձանագրել էր 84,100 մեկնում, 45,200 վերադարձ և 38,900 միգրանտների բացասական սալդո։ Այս ցուցանիշները նոտավորապես 2 անգամ ավելի բարձր են, քան սույն հետազոտության արդյունքում սահմանված տարեկան միջնացված ցուցանիշները (առավելագույնը 31,000 մեկնում, նվազագույնը 14,000 վերադարձ և առավելագույնը 17,000 բացասական սալդո)։ Նոյնիսկ հաշվի առնելով այն ռիսկը, որ հարցվողներից ոմանք կարող էին թաքցնել աշխատանքային միգրացիային իրենց մասնակցության փաստը, տարբերությունն այնքան մեծ է, որ այն անտեսել չի կարելի։

Մեր կարծիքով այս հանգամանքի հնարավոր բացատրություններից մեկն այն է, որ ԱՎԾ-ի կողմից անցկացված ուսումնասիրության մեջ կարող էին ներառված լինել նաև անհատ առևտրականները, որոնք հաճախակի կարճաժամկետ այցով մեկնում են արտերկիր՝ ապրանք ներմուծելու կամ արտահանելու նպատակով, մինչեռ մեր հետազոտությունը միգրացիայի այս յուրահատուկ տիպին չի անդրադարձել։

## **ՀՀ մարզերի միգրացիոն ակտիվությունը**

Միգրացիոն ակտիվության մարզային տարբերությունների մասին առաջին ներկայացուցական տվյալները ներկայացրել է ԱՎԾ-ը 1999թ.-ին «Արտաքին միգրացիոն գործընթացների նկարագրությունը Հայաստանի Հանրապետությունում 1991-1998 թթ.» հրապարակման մեջ։

3600 տնային տնտեսությունների զանգվածային հարցման արդյունքում ամենաբարձր միգրացիոն ակտիվությունն արձանագրվել է Գեղարքունիքում, Կոտայքում, Շիրակում և Լոռիում, միջին միգրացիոն ակտիվությունը՝ Երևանում, Արագածոտնում, Սյունիքում, Վայոց Ձորում և Տավուշում, իսկ ամենացածր ակտիվությունը՝ Արարատում և Արմավիրում:<sup>13</sup> Հետազոտության շրջանակներում սակայն միգրացիայի տիպերը չեն տարբերակվել և հետևաբար աշխատանքային միգրանտների բաշխումն ըստ մարզերի չի մասնավորեցվել։ Այնուամենայնիվ, տրամարանական էր ենթադրել, որ վերջինս այնքան էլ չպետք է տարբերվի միգրացիայի ընդհանուր վիճակագրությունից։ Մենք հնարավորություն ունեցանք ստուգելու այս փարկածը՝ հիմնվելով սույն

<sup>13</sup> Արտաքին միգրացիոն գործընթացների նկարագրությունը ՀՀ-ում 1991-1998 թթ., Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1999 (արդյուրք՝ Ռ. Եղանյան, Ն. Շահնազարյան, «Աշխատանքային էմիգրացիան Հայաստանից. գրականության ակնարկ», Երևան, 2004)

*Աղյուսակ 2-1 Աշխատանքային միգրացիան ՀՀ մարզերից*

Մարզ	Աշխատանքային միգրացիայում ներառված տնային տնտեսությունների տոկոսը	Աշխատանքային միգրանտների տոկոսը հարցված տնային տնտեսությունների անդամների մեջ
Շիրակ	32.9	9.2
Լոռի	21.2	7.5
Կոտայք	13.3	3.4
Գեղարքունիք	12.6	3.6
Արարատ	12.6	2.9
Վայոց Ձոր	11.8	1.8
Երևան	10.5	4.2
Արագածոտն	8.9	2.5
Տավուշ	7.8	2.1
Սյունիք	7.1	2.7
Արմավիր	6.8	1.5

Աղյուսակը ցույց է տալիս, որ տնային տնտեսությունների կտրվածքով ամենաբարձր ակտիվությունը գրանցվել է Շիրակում և Լոռիում, որտեղ համապատասխանաբար յուրաքանչյուր երրորդ և յուրաքանչյուր հինգերորդ տնային տնտեսություն ներառված է աշխատանքային միգրացիայի գործընթացում: Միգրացիոն միջին ակտիվությունը է գրանցվել Գեղարքունիքում, Կոտայքում, Արարատում, Վայոց Ձորում և Երևանում, իսկ ամենացածրը՝ Արագածոտնում, Սյունիքում, Տավուշում և Արմավիրում:

Սակայն ըստ միգրացիայի փաստացի տեմպի (բնակչության ընդհանուր թվի մեջ աշխատանքային միգրանտների տոկոսի) մարզերի դասավորությունը միանգամայն այլ է: Այլ մարզերի համեմատ միգրացիայի ամենաբարձր տեմպը արձանագրվել է Շիրակում, Լոռիում, Երևանում, Գեղարքունիքում և Կոտայքում:

Ինչպես ցույց տրվեց, արդյունքները շատ նման են 1999 թ. ԱՎԾ-ի հրապարակած տվյալներին, սակայն կան նաև տարբերություններ, որոնք պարզաբանման կարիք ունեն: Մեր կարծիքով այդ տարբերությունները պայմանավորված են երկու կարևոր հանգամանքներով.

- Նախ և առաջ, երկրի մասշտաբով ներկայացուցչական լինելով՝ մեր ընտրանքը նախագծված չէր յուրաքանչյուր մարզի համար նեկայացուցչականության միևնույն մակարդակն ապահովելու համար: (Պատճառն այն էր, որ բոլոր մարզերի համար բավարար վստահության մակարդակ և ընդունելի վիճակագրական սխալ ապահովելը կնշանակեր)

առնվազն երկու անգամ մեծացնել ընտրանքի ծավալը): Հետևաբար ցանկացած տվյալ, որը ներկայացվում է ըստ մարզերի, ոչ այլ ինչ է, քան մոտարկում:

2. Հայտնի է, որ ՀՀ որոշ մարզերի առանձին բնակավայրեր կամ շրջաններ ցուցաբերում են ավելի բարձր միգրացիոն ակտիվություն, քան մյուսները: Վերջինս հիմնականում վերաբերում է Գեղարքունիքին. վաղուց ի վեր հայտնի է, որ Մարտունի քաղաքն ու դրան հարակից 4-5 գյուղերը աշխատանքային միգրացիայի ամենաբարձր ցուցանիշներն ունեն ամբողջ հանրապետությունում: Մեր դեպքում, հետազոտության մերոդարձանության համաձայն, յուրաքանչյուր մարզում բնակավայրերն ընտրվել են պատահական սկզբունքով և վերը նշված համայնքներից ոչ մեկը հիմնական ընտրանքում չի ներկայացվել: Ուստի Գեղարքունիքում և նման առանձնահատկություններ ունեցող այլ մարզերում միգրացիայի տեմպը միգրուց թերագնահատված է:

Այնուամենայնիվ, ի նկատի ունենալով նշված վերապահումները և կատարելով սահմանային սխալի անհրաժեշտ հաշվարկներ՝ հնարավոր է մոտարկել աշխատանքային միգրանտների բացարձակ թիվը յուրաքանչյուր մարզից վերջին երեք տարիների ընթացքում:

#### *Աղյուսակ 2-2 Միգրանտների բացարձակ թվի գնահատումն ըստ մարզերի*

Մարզ	Մշտական բնակչությունը	Միգրացիայի տեմպը		Միգրանտների բացարձակ թիվը	
		Գրանցված	Առավելա- գույն	Գրանցված	Առավելա- գույն
Շիրակ	283,400	9.2	16.0	26,100	45,300
Լոռի	286,400	7.5	13.9	21,500	39,800
Երևան	1103,500	4.2	7.7	46,300	85,000
Գեղարքունիք	237,600	3.6	8.4	8,600	20,000
Կոտայք	272,500	3.4	7.7	9,300	21,000
Արարատ	272,000	2.9	6.9	7,900	18,800
Սյունիք	152,700	2.7	8.0	4,100	12,200
Արագածոտն	138,300	2.5	7.8	3,500	10,800
Տավուշ	134,400	2.1	7.0	2,800	9,400
Վայոց Ձոր	56,000	1.8	8.7	1,000	4,900
Արմավիր	276,200	1.5	4.4	4,100	12,200

Ինչպես երևում է, որոշ մարզերի համար հաշվարկված սահմանային սխալը շատ մեծ է և գնահատականները բավականին շփորեցնող են: Այնուամենայնիվ բերված տվյալներն օգտակար են յուրաքանչյուր մարզից աշխատանքային միգրանտների հնարավոր առավելագույն թիվը պատկերացնելու համար: Հաշվարկը կատարված է 99% վստահության նակարդակ նախատեսելով, ինչը նշանակում է՝ հավանականությունը, որ աշխատանքային միգրանտների իրական թիվն ամենում է ինտերվալի վերին սահմանը, ձգտում է զրոյի:

Մյուս կողմից հարկ է նշել, որ Երևանում գրանցված միզրացիոն ակտիվությունը (թե՛ տնային տնտեսությունների և թե՛ անհատական մակարդակներում) նման է 2004 թ.-ին «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն»-ի կողմից կատարված՝ Երևանի տնային տնտեսությունների ներկայացուցական հետազոտության արդյունքներին: Դրանց համաձայն՝ աշխատանքային միզրացիայում ներառված է մայրաքաղաքի տնային տնտեսությունների մոտ 9%-ը, իսկ միզրացիայի փաստացի տեմպը 3.9% է կամ 43,000 մարդ:<sup>14</sup> Սա բույլ է տալիս ենթադրել, որ աշխատանքային միզրանտների թիվը, համենայն դեպք Երևանում, մոտ է մեր սկզբնական գնահատականին:

### **Քաղաքային և գյուղական բնակչության միզրացիոն ակտիվությունը**

Միզրացիային նվիրված բազմաթիվ հետազոտություններ փաստել են, որ քաղաքային բնակավայրերի միզրացիոն ակտիվությունն ավելի բարձր է, քան գյուղական բնակավայրերինը: Նմանապես, մեր հարցումն էլ արձանագրեց, որ քաղաքներից աշխատանքային էմիզրացիայի տեմպը գրեթե երկու անգամ բարձր է, քան գյուղերից (5.4% և 2.8% համապատասխանաբար):

Ընդ որում, միզրացիոն ամենաբարձր ակտիվությունը գրանցվել է Լոռու (9.6%), Գեղարքունիքի (8.7%) և Շիրակի (8.4%) քաղաքային բնակավայրերում, իսկ ամենացածրը՝ Արմավիրի գյուղական համայնքներում (1.0%):

### **ԱՌԵԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՔԱՐՏԵԶԸ**

#### **Ուսուաստան և ԱՊՀ**

Աշխատանքային միզրանտների կողմից ամենահաճախ ընտրվող ուղևորության երկիրը եղել և մնում է Ուսուաստանը. Վերջին երեք տարիների ընթացքում առնվազը մեկ անգամ այս երկիր է այցելել հարցված աշխատանքային միզրանտների 87.6%-ը: Եթե վերածենք այս տվյալը բացարձակ թվի, կատանանք, որ 2002-2005 թթ. ընթացքում ՀՀ 87,600-143,600 քաղաքացի մեկնել է աշխատելու Ուսուաստանի Դաշնությունում:


Ընդհանուր առմամբ աշխատանքային միզրանտների 90.1%-ը աշխատել է ԱՊՀ երկրներում, ներառյալ (բացի Ուսուաստանից) Ուկրաինան (2.2%) և Ղազախստանը (0.3%): Այս արդյունքը բավականին սպասելի էր՝ հաշվի առնելով մի շարք օբյեկտիվ հանգամանքներ, ինչպիսիք են՝ լեզվական խոշընդունվածությունը, առանց մուտքի արտոնագրի երկիր մեկնելու իրավունքը, համենատարար ցածր ճանապարհածախար և ցածր ընթացիկ ծախսերը, ինչպես նաև աշխարհում ամենամեծ հայկական համայնքի առկայությունը:

<sup>14</sup> Տնային տնտեսությունների հարցում, ՀՌԿԿ, Երևան, 2004 (աղբյուրը՝ Ռ. Եգանյան, Ն. Շահնազարյան, «Աշխատանքային էմիզրացիան Հայստանից. գրականության ակնարկը», Երևան, 2004)

Ըստ հարցման արդյունքների, ԱՊՀ երկրներ մեկնող աշխատանքային միգրանտների 94.7%-ը հաստատվել են քաղաքային բնակավայրերում:

Ուսասատան մեկնողների զգալի թիվը հնարավորություն տվեց գնահատել ՀՀ քաղաքացիների միգրացիոն հոսքերը Դաշնության տարրեր քաղաքներ: Այսպես, ըստ հարցման տվյալների, միգրանտների մեծամասնությունը դեռևս նախընտրում է Մոսկվան. մայրաքաղաքում ապաստանել է ՌԴ մեկնող հարցողների 43.1%-ը: Այլ հաճախակի ընտրվող քաղաքներն են Սանկտ-Պետերբուրգը, Տյումենը, Չելյարինսկը և Ուստուլը: Այնուամենայնիվ աշխատանքային միգրանտների թիվը նշանակալի քաղաքներից յուրաքանչյուրում մոտավորապես 8 անգամ փոքր է, քան Մոսկվայում:

Ինչ վերաբերում է ոեզինալ քաշխմանը, ապա միգրանտների մեծամասնությունը կենտրոնացած էր Ուսասատանի Եվրոպական հատվածում, իսկ ամենացածր ցուցանիշը գրանցվել է Սիբիրում և ՌԴ հեռավոր արևելքում:



## **Եվրոպա,Հյուսիսային Ամերիկա և այլ երկրներ**

Ինչպես նախապես նշվեց, աշխատանքային միգրանտների ճնշող մեծամասնությունը (90.1%-ը) աշխատանք է գտնել (կամ փորձել է գտնել) ԱՊՀ-ում: Չնայած այլ երկրներ նախընտրած միգրանտների բացարձակ թիվը չափազանց փոքր է որևէ հիմնավոր ընդհանրացում անելու համար (ընդհամենը 57 միգրանտ երկու ընտրանքներից), տվյալները կարող են օգտակար լինել Հայաստանից աշխատանքային միգրացիայի ընդհանուր հոսքերը պատկերելիս:

Այսպես, մնացած 9.9%-ի մեջ ամենամեծ մասնաբաժնը պատկանում է Եվրոպական Միության երկրներին (մեր ընտրանքից՝ 31 միգրանտ կամ ՀՀ մաշտարով՝ մոտավորապես 7,000 մարդ), ընդ որում ամենահաճախը նշվել է Ֆրանսիան: Մի քանի աշխատանքային միգրանտներ մեկնել են ԵՄ այլ երկրներ, այդ թվում՝ Գերմանիա, Հունաստան, Դանիա, Իսպանիա, Լեհաստան, Բելգիա և Բուլղարիա:

Մոտավորապես յուրաքանչյուր երրորդ աշխատանքային միգրանտ, որը չէր նախընտրել աշխատել ԱՊՀ երկրներում, մեկնել է ԱՄՆ (մեր ընտրանքից՝ 21 միգրանտ կամ ՀՀ մաշտարով՝ մոտ 5,000 հոգի): Բացի այդ, հարցման ընթացքում գրանցվել է աշխատանքային ուղևորության 4 դեպք դեպի Թուրքիա և 1 ուղևորություն դեպի Միացյալ Արարական Էմիրություններ:

Այս արդյունքը նոյնապես կարելի էր կանխատեսել: Ինչպես արդեն նշվեց, ուսումնասիրությունը ներառել է միայն այն միգրանտներին, որոնք որոշակի ժամանակահատվածի ընթացքում ապրել և աշխատել են ուղևորության երկրում: Աշխատանքային միգրացիայի բարտեզն այլ տեսք կունենար, եթե դրանում ներառեինք նաև անհատ առևտրականներին. անշուշտ այդ դեպքում զգալի տոկոս կկազմեին նաև Թուրքիա և Իրան մեկնող միգրանտները:

## **Ուղևորության երկրի ընտրությունը պայմանավորող գործոնները**

Թեև, ինչպես նշվեց, հարցված աշխատանքային միգրանտների բացարձակ թիվը բոլոր երկրներում, բացառությամբ Ռուսաստանի, շատ փոքր է, հետաքրքիր էր կապեր գտնել միգրանտների ապաստանած երկրների և նրանց սոցիալ-ժողովրդագրական տվյալների միջև: Հատկապես ցանկանում էինք տեսնել՝ արդյոք ԱՊՀ-ի և այլ երկրների միջև ընտրությունը պայմանավորված է որոշակի օրյեկտիվ գործոններով, ինչպիսիք են ա) Հայաստանում միգրանտի բնակության վայրը, բ) նրա սեողը, զ) տարիքը և դ) կրթությունը: Այս մասում մենք քննարկում ենք առաջին հիպոթետիկ կախվածությունը, իսկ մյուսներին կանդրադառնանք Գլուխ 3-ում:


Ալյուսակ 2-3-ը ցույց է տալիս Հայաստանի տարբեր մարզերից աշխատանքային էմիգրացիայի հոսքերը 3 հիմնական ուղղություններով՝ ԱՊՀ երկրներ, ԵՄ երկրներ և ԱՄՆ:

**Աղյուսակ 2-3 Աշխատանքային միգրանտների ուղևորության  
երկրներն ըստ մարզերի**

Մարզ	Ուղևորության երկիրը		
	ԱՊՀ (%)	ԵՄ (%)	ԱՄՆ (%)
Երևան	54.2	10.4	35.4
Արագածոտն	100.0	0.0	0.0
Արարատ	100.0	0.0	0.0
Արմավիր	93.0	5.9	1.1
Գեղարքունիք	98.0	2.0	0.0
Լոռի	94.8	3.0	2.2
Կոտայք	96.0	4.0	0.0
Շիրակ	95.7	4.3	0.0
Սյունիք	100.0	0.0	0.0
Վայոց Ձոր	100.0	0.0	0.0
Տավուշ	100.0	0.0	0.0

Ինչպես նկատեցինք, ԵՄ երկրներ և ԱՄՆ մեկնած աշխատանքային միգրանտների մեծամասնությունը Երևանի քնակիշներ են: Թեև տոկոսային հարաբերությունը կարող է որոշ չափով շեղված լինել՝ հանրապետության առանձին մարզերում հարցմանը մասնակցած միգրանտների սակավաթվության պատճառով, այնուամենայնիվ բացահայտված կապը խիստ ակնհայտ է:

Մյուս հիշարժան հայտնաբերություններում և ԱՄՆ-ում ապաստանած աշխատանքային միգրանտների խմբում ՀՀ քաղաքային և գյուղական քնակավայրերից մեկնածների հարաբերությունը մոտավորապես 4:1 է: Գծապատկեր 2-4-ը ցույց է տալիս թե՛ Հայաստանի քաղաքային և գյուղական շրջանների միգրանտների ուղևորության երկրները (տես տվյալների աղյուսակը) և թե՛ երեք ուղղություններով հոսքերի կազմը (տես պատկերը):




## **ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Յանկացած սոցիալական գործընթաց ունի մասնակիցների յուրօրինակ կառուցվածք: Ըստի այս զլիսում փորձում ենք նկարագրել աշխատանքային միգրանտների ժողովրդագրական, սոցիալական և տնտեսական առանձնահատկությունները, որոնք կարող են օգնել ավելի լավ հասկանալ աշխատանքային միգրացիայի երևոյթը և դատել դրա հետևանքների մասին:

### **ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### **Միգրանտների սեռատարիքային կազմը**

Ըստ հետազոտության արդյունքների, աշխատանքային միգրանտների 85.9%-ը տղամարդիկ են, իսկ 14.1%-ը՝ կանայք:



Ընդ որում, տղամարդ միգրանտների տոկոսը ՀՀ 15 տարեկանից բարձր արական բնակչության մեջ կազմում է 9.2%, մինդեռ կանանց դեպքում այն 7 անգամ փոքր է (1.3%):


Այս արդյունքների տարածումն ընդհանուր բնակչության վրա, թույլ է տալիս գնահատել տղամարդ և կին միգրանտների բացարձակ թիվը 2002-2005 թթ.: 92,000-118,000 տղամարդ և 11,300-22,300 կին: Եթե այս թիվը տարածենք ոչ թե ողջ բնակչության, այլ միայն նրա տնտեսապես ակտիվ հատվածի վրա, ապա կստանանք, որ աշխատանքային միգրանտ է տնտեսապես ակտիվ տղամարդկանց 10.9-14.0%-ը և կանանց 1.5-3.0%-ը:

Այսպիսի սեռային անհամաշավությունը պայմանավորված է մի շարք գործուներով և ամենակարևորը՝ ազգային մտածելակերպով, ըստ որի կանանց դերը սահմանափակվում է տնային գործունեությամբ, իսկ տղամարդիկ համարվում են տնային տնտեսության ֆինանսական բարեկեցության հիմնա-

կան պատասխանատուն: Կանանց աշխատանքային միզրացիայի վերաբերյալ հասարակական դիրքորոշումներն ավելի մանրամասնորեն կը ննարկվեն Գլուխ 6-ում:

Այստեղ հարկ է նշել, որ կանանց միզրացիոն ակտիվությունն ակնհայտորեն կախված է նրանց բնակության վայրից: Եթե կանայք կազմում են Հայաստանի գյուղական շրջաններից աշխատանքային միզրանտների միայն 7.3%-ը, քաղաքային բնակավայրերում կին միզրանտները կազմում են 17.3%-ը: Այս արդյունքը կարելի է բացատրել նրանով, որ գյուղական բնակչությունը ավելի քիչ է ներառված գլոբալիզացիայի գործընթացում և հետևաբար ավելի պահպանողական է մնում գեներացիային դերերի և սեռերի հավասարության հարցում: Ավելին, այս իմաստով բնական կլիներ, որ երևանից աշխատանքային միզրացիայի մասնակիցների սեռային կառուցվածքը տարբերվեր Հայաստանի մնացած բոլոր բնակավայրերից: Եվ իրոք պարզվում է, որ մայրաքաղաքի գրեթե յուրաքանչյուր չորրորդ աշխատանքային միզրանտ կին է (24.0%), ինչը երկու անգամ գերազանցում է այլ մարզերում կին միզրանտների տոկոսը (12.1%):

Աշխատանքային միզրացիայի գործընթացին տղամարդկանց և կանանց մասնակցության առանձնահատկությունները քննարկելիս կցանկանայինք անդրադասականացնելու միզրանտների ուղևորության երկրների մասին տվյալներին: Թեև թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց մեծամասնությունը մեկնել է ԱՊՀ երկրներ, հետաքրքիր բացահայտում է այն, որ կին միզրանտների շրջանում ԵՄ երկրներ և ԱՄՆ ուղևորվածների տոկոսը մի քանի անգամ գերազանցում է այդ երկրներ մեկնած տղամարդկանց տոկոսը (3.4 անգամ ԵՄ երկրների դեպքում և 4.3 անգամ ԱՄՆ-ի դեպքում):



Ինչ վերաբերում է աշխատանքային միզրանտների տարիքային կառուցվածքին, ապա նրանց ճնշող մեծամասնությունը (86.6%) 21-50 տարեկան են: Ընդ որում մեծամասնություն են կազմում 41-50 տարեկանները.

կոպիտ հաշվարկով այս տարիքային խմբին է պատկանում յուրաքանչյուր երրորդ աշխատանքային միգրանտը (34.2%): Միգրանտների միջին տարիքը 38.2 տարեկանն է (տղամարդկանց դեպքում՝ 38.3, կանաց դեպքում՝ 36.4): Թե՛ տղամարդ և թե՛ կին միգրանտներից ամենաերիտասարդը 20 տարեկան է: Ամենատարեց տղամարդը՝ 69 տարեկան է, իսկ կին միգրանտների տարիքի վերին սահմանը 56-ն է:

Հետաքրքիր կազ է հաստատվել աշխատանքային միգրանտների տարիքի և նրանց ուղևորության երկրների միջև: Պարզվում է, որ ԵՄ երկրներում և ԱՍԴ-ում աշխատածների միջին տարիքը (44.8) նկատելիորեն բարձր է ԱՊՀ երկրներ մեկնածների միջին տարիքից (38.5): Բացի այդ, ԵՄ երկրներ և ԱՍԴ ուղևորված ամենաերիտասարդ միգրանտները համապատասխանաբար 27 և 30 տարեկան են, մինչդեռ ԱՊՀ երկրներում ապաստանածների 15%-ը 25 տարեկանից երիտասարդ են:

Հետաքրքիր է բացահայտել միգրացիոն ակտիվության դիմամիկան՝ կախված տարիքային գործոնից. պարզել, թե բնակչության որ տարիքային խմբերն են դրսւորում ամենացածր և ամենաբարձր միգրացիոն ակտիվությունը: Աղյուսակ 3-1-ը ամփոփում է նշված տվյալներն ըստ միգրանտների ընդհանուր թվի և ըստ սեռերի:

### *Աղյուսակ 3-1 Տարրեր տարիքային խմբերի միգրացիոն ակտիվությունը*

Տարիքային խումբ	Միգրացիոն ակտիվությունը (միգրանտների տոկոսը տվյալ տարիքային խմբի մեջ)		
	Ընդամենը	Տղամարդիկ	Կանայք
16-20	0,4	0,6	0,3
21-25	6,0	10,9	1,5
26-30	7,5	12,8	1,6
31-35	7,5	14,2	1,8
36-40	7,6	14,6	2,0
41-45	7,9	15,1	3,1
46-50	9,8	17,4	2,1
51-55	5,2	10,6	0,6
56-60	2,7	4,6	0,2
61-65	2,3	4,3	0,1
66 և բարձր	0,8	1,3	0,1
<b>Ընդամենը</b>	<b>4,1</b>	<b>9,2</b>	<b>1,3</b>

Աղյուսակը ցույց է տալիս միգրացիոն ակտիվության հաստատուն աճը՝ սկսած 21 տարեկանից, որն իր գագաթնակետին է հասնում 46-50 տարիքային խմբում. այս տարիքի յուրաքանչյուր վեցերորդ հայր վերջին երեք տարիների

ընթացքում ներառված է եղել աշխատանքային միգրացիայի գործնթացում: 51 տարեկանից հետո՝ գրեթե բոլոր հաջորդող տարիքային խմբերում, միգրանտների տոկոսը երկու անգամ նվազում է:

Բացի այդ, տարրեր տարիքային խմբերի կանայք և տղամարդիկ հակված են ցուցաբերել միգրացիոն ակտիվության տարրեր մակարդակներ: Այսպես, տղամարդկանց «ամենաարտադրողական» տարիքը 46-50 է, իսկ կանանց միգրացիոն ակտիվության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 41-45 տարիքային խմբում: Բացի այդ, կանանց միգրացիոն ակտիվությունը սկսում է նվազել արդեն 46 տարեկանից, իսկ տղամարդկանց դեպքում այն զգալի մակարդակ է պահպանում մինչև 56 տարեկանը:

Աշխատանքային միգրանտների մեծամասնությունը (63.1%) առաջին անգամ արտասահման աշխատանքի է մեկնել 35 տարեկանից երիտասարդ հասակում, և միայն 8.9%-ն է կատարել իր առաջին ուղևորությունը 46 տարեկանից բարձր տարիքում: Ամենաերիտասարդ աշխատանքային միգրանտը 17 տարեկան էր, իսկ առաջին անգամ մեկնող միգրանտների միջին տարիքը 32.8 տարեկան էր:

### **Ամուսնական կարգավիճակն ու ընտանեկան կապերը**

Միգրանտների ճնշող մեծամասնությունը (81.7%) ամուսնացած է, 14.9%-ը երբեք ամուսնացած չի եղել, 2.2%-ը ամուսնալուծված է և 1.1%-ը այրի կամ ամուրի է: Դեպքերի մեծամասնությունում միգրանտը կամ ընտանիքի գլխավորն է (տղամարդ), կամ նրա որդին:

*Աղյուսակ 3-2 Միգրանտի կապը տնային տնտեսության զինավորի հետ*


Կապը	Տոկոս
S/ն զինավորը (տղամարդ)	38,9
Գլխավորի կինը	4,4
Տղան/փեսան	40,7
Դուստրը/հարսը	5,6
Այլ տղամարդ ազգական	5,9
Այլ կին ազգական	4,4
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>

Այն, ինչ արդեն ասվեց միգրանտների ժողովրդագրական կառուցվածքի մասին, իսկապես ապացուցեց, որ աշխատանքային միգրացիան ոչ այլ ինչ է, եթե ոչ «հայրերի յուրահատուկ արշավ՝ ուղղված ընտանիքի համար ապրուստի միջոցներ հայրայրելուն»:<sup>15</sup>

<sup>15</sup> Աշխատանքային էմիգրացիան Հայաստանից. գրականության ակնարկ, Ռ. Եգանյան, Ն. Շահնազարյան, Երևան, 2004, էջ 59 (մեջբերում ՀՀ սահմանային անցակետերում ուղևորների հետ անցկացված ընտրանքային հետազոտությունից, ԱՎԾ, 2002)

## **Միզրանտների կրթությունը**

**Գծապատկեր 3-3 Միզրանտների կրթամակարդակը**



Աշխատանքային միզրանտների մեծամասնությունն ունի միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն (39.9 և 32.5% համապատասխանաբար): Միզրանտների մոտավորապես 1/5-ը (19.5%) ունի բարձրագույն կամ հետրուհական կրթություն: Բացի այդ, ամենաբարձր միզրացիոն ակտիվությունն են դրսնորում միջին մասնագիտական կրթությամբ մարդիկ, իսկ ամենացածրը՝ նրանք, ովքեր չեն ավարտել միջնակարգ դպրոցը: Աղյուսակ 3-3-ում ափոփովում է տարբեր կրթամակարդակ ունեցող բնակչության միզրացիոն ակտիվությունը:

### **Աղյուսակ 3-3 Կրթությունը և միզրացիոն ակտիվությունը**

Կրթամակարդակ	Միզրացիոն ակտիվությունը
Սիզինակարգից ցածր	0,8
Սիզինակարգ	5,3
Սիզին մասնագիտական	7,7
Բարձրագույն և հետրուհական	5,7

## **Միգրանտների մասնագիտությունը**

Աշխատանքային միգրանտների 39.4%-ը բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող մարդիկ են հետևյալ մասնագիտացումներով՝ ճարտարագիտություն (15.1%), շինարարություն (11.2%), հասարակական գիտություններ (8.8%), բնական գիտություններ (2.4%) և գյուղատնտեսություն (1.8%):


Կշիռով հաջորդն այն միգրանտների խումբն է, որոնք չունեն որևէ մասնագիտություն, այսինքն՝ միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ոչ մի ֆորմալ կրթական գործընթացի չեն մասնակցել և հետևաբար մասնագիտական կրթության վկայական չեն ստացել: Այս խմբին է պատկանում յուրաքանչյուր երրորդ միգրանտ (33.9%):

Միգրանտների մոտավորապես 1/4-ը որակավորված բանվորներ են՝ վարորդներ, հացբուխներ, ատաղձագործներ, ներկարարներ, փայտամշակներ և այլն: Միգրանտների 2.4%-ը ներկայացնում է արվեստի և սպորտի բնագավառները:

Կին միգրանտների փոքրաբիկությունը (ընդամենը 39 միգրանտ) անհնար է դարձել տղամարդկանց և կանանց մասնագիտական «պաշարի» ճշգրիտ համեմատությունը: Այնուամենայնիվ հարցման ընթացքում գրանցվել են հետևյալ կոպիտ գնահատականները՝ մասնագետների և որակավորված բանվորների թիվը տղամարդկանց մեջ ավելի բարձր է, քան կանանց (բանվորներինը՝ 1.5 անգամ, իսկ մասնագետներինը՝ 6 անգամ), իսկ մասնագիտություն չունեցող կանանց տոկոսը մոտավորապես երկու անգամ գերազանցում է նույն խմբի տղամարդկանց տոկոսը:

Հետաքրքիր է և բնական, որ միգրանտների մասնագիտական կառուցվածքը փոփոխվում է՝ կախված ուղևորության երկրից: Այսպես, ԵՄ և ԱՄՆ մեկնած միգրանտների մեծամասնությունը համալսարանական կրթությամբ մասնագետներ են, իսկ նրանք, ովքեր մեկնում են ԱՊՀ երկրներ, հիմնականում կամ մասնագիտություն չունեն, կամ էլ որակավորված բանվորներ են: Ավելին, ԱՄՆ ուղևորված բոլոր միգրանտներն ունեն առնվազը բանվորի որակավորում: Այնուամենայնիվ, եթե Ռուսաստանի դեպքում հետազոտության ընթացքում արձանագրված տվյալները կարելի է ճշգրիտ համարել, ապա այլ երկրների համար տրված բաժանումն ընդամենը մոտարկում է՝ սահմանափակ ինֆորմացիայի պատճառով:

**Գծապատկեր 3-4 Միզրանտների մասմագիտական որակավորումն ըստ լնդունող երկրների**



**Աշխատանքային միզրանտի տիպական նկարագիրը**


Եթե ամփոփենք այս գլխում ներկայացված ինֆորմացիան, արտերկրոս աշխատող տիպական հայ միզրանտին կարող ենք պատկերել որպես միջնակարգ կամ միջին մասմագիտական կրտությամբ 41-50 տարեկան ամուսնացած տղամարդ, որը սկսել է աշխատանք վնտրել արտասահմանում 32-33 տարեկանում:

**ԶԲԱԴԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

**Զրադառնությունը**

Աշխատանքային միզրանտների մոտավորապես կեսը (50.7%), նախքան իրենց առաջին ուղևորությունն արտասահման, ներառված են եղել եկամտաբեր գործունեության մեջ: Ընդ որում, նրանց 64.6%-ն ունեցել է մշտական աշխատանք, իսկ 35.4%-ը՝ պատահական աշխատանք:

**Գծապատկեր 3-5 Միզրանտների զրադառնությունը Հայաստանում**



Սա թույլ է տալիս ենթադրել, որ յուրաքանչյուր երկրորդ միգրանտի դեպքում աշխատանքային միգրացիան պայմանավորված չի եղել աշխատատեղի բացակայությամբ:

Աղյուսակ 3-4-ը ներկայացնում է Հայաստանում աշխատանքային միգրանտների զբաղվածության հիմնական ոլորտները:

#### *Աղյուսակ 3-4 Զբաղվածության հիմնական ոլորտը Հայաստանում*

Ոլորտը	Տոկոս
Ծառայություններ	22,9
Շինարարություն	16,3
Գյուղատնտեսություն	15,9
Առևտուր/հասարակական սնունդ	15,4
Արտադրություն	9,3
Տրանսպորտ	6,6
Կրթություն	4,4
Գիտություն	2,2
Արվեստ	2,2
Այլ	4,8
<b>Ընդամենը</b>	<b>100,0</b>

Ինչ վերաբերում է կարգավիճակին, ապա զբաղված միգրանտների մեծամասնությունը (65.4%) որակավորված բանվորներ էին կամ ծառայողներ (35.8% և 29.6%): 26.5%-ը ինքնազբաղվածներ էին (ներառյալ գյուղատնտեսության մեջ զբաղվածներին) և 8.0%-ը՝ գործատուներ:

#### *Ամսեկան միջին եկամուտը*

Հարցման համաձայն, նախքան արտասահման մեկնելը միգրանտների 80.3%-ը Հայաստանում վաստակել է ամսեկան մինչև 100 ԱՄՆ դոլար: Միգրանտների 15.5%-ը ստանում էր 100-200 ԱՄՆ դոլար և միայն 4.2%-ի ամսեկան վաստակն է գերազանցել 200 դոլարը:

Միգրանտների հաշվարկված միջին ամսեկան եկամուտը Հայաստանում կազմում էր 97.5 ԱՄՆ դոլար: Այս վաստակը ընտանիքների ընդամենը 12.2%-ի համար էր եկամուտի միակ աղբյուրը հանդիսանում: Ավելին, դեպքերի մեծ մասում (56.9%) նշված գումարը չէր լրացնում տնային տնտեսությունների բյուջեի նույնիսկ կեսը՝ կազմելով, միջին հաշվով, ընտանիքի ամսեկան համախառն եկամուտի միայն 37.0%-ը:

Այս կարևոր փաստը բույլ է տալիս անուղղակի կերպով գնահատել աշխատանքային միզրացիայի գործընթաց ներառվող ընտանիքների կենսանակարդակը: Ստացվում է, որ տնային տնտեսությունների միջին ամսեկան եկամուտը կազմել է մոտավորապես 250 ԱՄՆ դոլար: Այս իրողությունն ապացուցում է այլ հետազոտողների կողմից նշված այն փաստը, որ աշխատանքային միզրանտները հիմնականում միջին եկամուտ ունեցող ընտանիքներից են: Սա շատ բնական է, քանի որ միջինից ցածր եկամուտ ունեցող խավը ուղևորությունը կազմակերպելու համար բավարար ֆինանսական միջոցներ չունի, իսկ նրանք, ովքեր հայրենի երկրում ունեն բարձր եկամուտ, աշխատանքային միզրացիային մասնակցելու շարժառիթ չունեն:

---

#### **ԳԼՈՒԽ 4. ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՔ**

---

Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա՝ այս գլուխն ընթերցողին կուղեկի աշխատանքային միգրացիայի ամրող գործընթացի միջով, ուղևորության ճախապատրաստումից մինչև ուղևորության երկրում եկամուտի գոյացումը և միգրանտի այրելակերպը:

---

#### **ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ**

---

Միգրանտների ճնշող մեծամասնության (94.2%) հավաստմաբ՝ նրանց վերջին այցը արտասահման ծրագրված էր որպես աշխատանքային ուղևորություն: Միայն 5.8%-ը չուներ ընդունող երկրում աշխատանք գտնելու մտադրություն, սակայն չէր էլ բացառում դրա հավանականությունը:


**Ուղևորության երկիրն ընտրելիս միգրանտներն առաջնորդվել են հետևյալ գործոններով. տվյալ երկրում ապրող բարեկամներ, ընկերներ (66.1%), երկիր մուտք գործելու և աշխատանք գտնելու համեմատաբար քիչ խոչընդոտներ (28.2%) և տվյալ երկիրի լեզվի իմացություն (19.3%): Որոշիչ գործոնների նման համակցությունն օգնում է հասկանալ, թե ինչո՞ւ է միգրանտների մեծամասնությունը մեկնում Ռուսաստան և ԱՊՀ այլ երկրներ, և ոչ թե արևմտյան պետությունները:**

Միգրանտներից միայն քերին էր հաջողվել ձեռք բերել **կոմվիստ ճախճական պայմանավորվածություն** աշխատանքի բնույթի, վարձատրության շափի և կացարանային պայմանների վերաբերյալ մինչ ընտրված երկրում հաճգրվանելը: Յուրաքանչյուր երկրորդ միգրանտ պատկերացում չի ունեցել աշխատավարձի մասին, յուրաքանչյուր երրորդը չի իմացել, թե ինչպիսի աշխատանք պետք է կատարի և յուրաքանչյուր չորրորդը պայմանավորվածություն ձեռք չի բերել անգամ կացարանային պայմանների վերաբերյալ:

Գծապատկեր 4-1-ը պատկերում է, թե որքանով են միզրանտները նախապատրաստված եղել ուղևորության՝ բնակվելու վայրի և աշխատանքի պայմանների վերաբերյալ նախնական պայմանավորվածություն ունենալու առումով:

**Գծապատկեր 4-1 Աշխատանքային ուղևորության վերաբերյալ նախնական պայմանավորվածությունը**

- Կար կոնկրետ պայմանավորվածություն
- ▨ Կար որոշ պայմանավորվածություն
- ▢ Կար որոշ ինֆորմացիա
- Ոչ մի ինֆորմացիա չկար



Նման իրավիճակները հիմնականում պայմանավորված են այն փաստով, որ դեպքերի մեծ մասում (44.1%) միզրանտները կատարել են աշխատանքային ուղևորությունն առանց որևէ երրորդ կողմի միջնորդության: Յուրաքանչյուր երրորդ դեպքում (32.5%) միզրանտին որոշ աջակցություն են ցուցաբերել ուղևորության երկրում բնակվող ընկերներն ու ազգականները և ավելի քիչ դեպքերում (11.3%) օգնությունը տրամադրվել է անհատ միջնորդի կողմից (կրկին ուղևորության երկրում): Տեղական և օտարերկրյա կազմակերպությունների աջակցությունից օգտվել է աշխատանքային միզրանտների միայն 4.6%-ը:

Այն դեպքերում, երբ միզրանտն ունեցել է որևէ ֆորմալ կամ ոչ ֆորմալ միջնորդ, տրամադրված աջակցությունը հիմնականում ներառում էր օգնություն աշխատանք գտնելու հարցում (57.8%), սննդով և բնակարանով ապահովում (46.1%), ճանապարհածախափ վճարում (30.5%) կամ պարտքով գումար՝ սկզբնական շրջանում ծախսերը հոգալու համար (17.2%): Մի քանի միզրանտների (6.3%) օգնել են ստանալ մուտքի արտոնագիր (վիզա), այն երկրների համար, որտեղ վերջինս պահանջվում էր:

Հարցվողների ճնշող մեծամասնությունը պնդում էր, որ միջնորդներն ամրողությամբ կատարել են իրենց սկզբնական խոստումները (76.3%) կամ էլ կատարել են դրանք կիսով չափ (18.3%): Միայն 10 միզրանտ է նշել, որ միջնորդներից իրենց սպասումները չեն արդարացել:

Աշխատանքի և աշխատավարձի մասին սահմանափակ ինֆորմացիայի պատճառով, միգրանտների զգալի մասը (40.3%) ընդհանրապես չէր պլանավորել վերջին աշխատանքային **ուղևորության** **տևողությունը**: Նրանք, ովքեր կարողացել են կանխատեսել իրադրությունը, հիմնականում պլանավորել էին մնալ ուղևորության երկրում 6-12 ամիս (55.0%): Փոքրարիվ են այն միգրանտները, որոնք պլանավորել էին երկրում մնալ 3 ամսից պակաս կամ 1 տարուց ավել (6.1% և 11.4% համապատասխանաբարար): Ստացված տեղեկություններով կարող ենք մոտարկել, որ ուղևորության միջին պլանավորված տևողությունը 8 ամիս է եղել:

Ինչ վերաբերում է **ուղևորության ֆինանսավորմանը**, ապա պետք է ասել, որ միգրանտների 42.0%-ը կարողացել է հոգալ ծախսերը իրենց տնային տնտեսության բյուջեից: Այնուամենայնիվ, դեպքերի մեծամասնությունում, միգրանտները ստիպված էին պարտք վերցնել կամ նոյնիսկ վաճառել իրենց սեփականությունը (40.2% և 7.9% համապատասխանաբարար): Աշխատանքային ուղևորությունների 8.3%-ը ֆինանսավորվել է միգրանտների ապագա գործատուների կողմից:

Այն դեպքերում, երբ ուղևորության երկիրը պահանջում էր **մուտքի վիզա**, միգրանտների մեծամասնությունը (88.9%) հավաստեց, որ այն ստացել է միայն պաշտոնական վճարումներ կատարելով: 4 միգրանտներ պնդեցին, որ իրենք ստիպված են եղել հավելյալ վճարել (կաշառել) պաշտոնյաներին՝ մուտքի վիզա ձեռք բերելու համար: Ընդ որում, հարցվողների 5.1%-ի խոսքերով, իրենք գիտեն մարդկանց, ովքեր ստիպված են եղել կաշառը տալ՝ օտար երկրների մուտքի վիզա ձեռք բերելու համար:

Ինչ վերաբերում է Հայաստանից **ելքի թույլտվություն** ստանալուն, հարցվողներից քչերն են (25 մարդ կամ հարցվողների 1.4%-ը) պնդել, որ գիտեն դեպքեր, երբ ելքի թույլտվությունը մերժվել է:<sup>16</sup> Հաստ հարցվողների, մերժման հիմնական պատճառն այն է եղել, որ երկրից հեռանալ պլանավորող անձը պետք է ծառայեր բանակում (5 դեպք): 10 հարցվողներ ասել են, որ իրենցից կաշառը են ուզել, մինչդեռ մնացած 10 դեպքերում մերժումը չի պատճառաբանվել:


Միգրանտների փոքրամասնությունը (16.6%) մեկնել էր արտասահման հայրենակիցների բրիգադի կազմում, իսկ մնացած 82.9%-ը՝ անհատապես:

<sup>16</sup> Ելքի թույլատվությունը ՀՀ համապատասխան պետական մարմնի կողմից անձնագրում դրված կնիքն է, որը ՀՀ քաղաքացու անձնագիրը վավեր է դարձնում արտերկրում:

### **Ուղևորության սեզոնայնությունը և իրական տևողությունը**

Արտաքին միջրացիոն գործընթացների շատ հետազոտություններ նշել են էմիգրացիոն և ռեեմիգրացիոն հոսքերի սեզոնային բնույթը: Մեր հետազոտության արդյունքները ևս թույլ են տալիս փաստել, որ աշխատանքային միջրացիան հիմնականում սեզոնային երևույթ է:

Այսպես, գծապատկեր 4-2-ը ցույց է տալիս, որ միջրանտների մեծամասնությունը երկրից հեռանում է գարնան սկզբին կամ վերջին և վերադառնում է Հայաստան աշնան վերջին կամ ձմռան սկզբին:



Ինչ վերաբերում է ուղևորության տևողությանը՝ պետք է ասել, որ միջրանտների մեծամասնությունը (67.5%) արտասահմանում է մնում 5-11 ամիս: Ինչպես արդեն նշեցինք, միջրանտների կեսից ավելին նախօրոք ծրագրել էր վերջին ուղևորության տևողությունը: Հետաքրքիր է տեսնել, արդյո՞ք այցի իրական տևողությունը համապատասխանել է նրանց ծրագրերին:

Պարզվում է, որ ուղևորության փաստացի միջին տևողությանը 9 ամիս է, որը որոշ չափով գերազանցում է միջրանտների կողմից նախօրոք պլանավորված միջին տևողությունը: Ավելին, թեև միջրանտների միայն 11.1%-ն էր երկարաժամկետ ուղևորություն պլանավորել, յուրաքանչյուր հիմքերորդ միջրանտ իրականում ուղևորության երկրում բնակվել է 1 տարուց ավելի: Միաժամանակ, ոչ ավել, քան 3 ամսից Հայաստան վերադառնալ պլանավորող միջրանտների միայն 1/3-ն է ի վերջո վերադարձել նշված ժամկետում:

Հետաքրքիր էր բացահայտել, որ ուղևորության տևողությանը կախված է միջրանտներին ընդունող երկրից: Ռուսաստանում միջրանտների ուղևորության միջին տևողությունը 9 ամիս է եղել, ԱՊՀ այլ երկրներում՝ 7.5 ամիս, ԵՄ երկրներում՝ 6.5 ամիս, իսկ ԱՄՆ-ում՝ ընդամենը 2 ամիս:

## **Կացության կարգավիճակը**

Ուղևորության երկրում միգրանտների իրավական կարգավիճակը ներկայացված է Աղյուսակ 4-1-ում:

### **Աղյուսակ 4-1 Աշխատանքային միգրանտների կարգավիճակը**

Կարգավիճակ	Տոկոս
Ընդունող երկրի քաղաքացի	4,5
Բնակության և աշխատանքի իրավունք	8,5
Բնակության իրավունք առանց աշխատելու իրավունքի	1,3
Ժամանակավոր գրանցում	72,9
Պաշտոնապես գրանցված չէ	10,5
Դժվարանում եմ պատասխանել	2,2
<b>Ընդամենը</b>	<b>100,0</b>

Ինչպես երևում է, միգրանտների մեծամասնությունն ունի ժամանակավոր գրանցում (ինչը բնական է, հաշվի առնելով, որ նրանց հիմնական մասը ապրուի է ԱՊՀ երկրներում), իսկ յուրաքանչյուր տասներորդ միգրանտ բառացիորեն օրինախախտ է հանդիսանում:

Հայ աշխատանքային միգրանտների միայն 4.5%-ն ունի ընդունող երկրի քաղաքացիություն: Այնուամենայնիվ, հարցված միգրանտների 21.0%-ը իրենց վերջին աշխատանքային ուղևորության ընթացքում փորձել են երկրում մշտական բնակություն հաստատել:

### **Զրադաշտությունը**

Միգրանտների մեծամասնությանը (64.3%) աշխատանքի հնարավորությունների մասին տեղեկացրել են ուղևորության երկրում ապրող ազգականներն ու ընկերները: Քանի որ, ինչպես նշվեց, միգրանտները հակած են ընտրել այն երկրները, որտեղ ապրում են նրանց հարազատները, այս արդյունքը զարմանալի չէ: Միգրանտների 16.5%-ը սկսել է ինքնուրույն աշխատանք փնտրել երկիր ժամանելուց հետո: Միայն 3%-ն է օգտվել տեղական զբաղվածության գործակալությունների ծառայություններից (ուղևորության երկրում), իսկ մնացած 3%-ը թափուր աշխատատեղերի մասին տեղեկություն է ստացել ԶԼՄ-ներից:

Բավականին քաջալերող է այն փաստը, որ միգրանտների մեծամասնությունն սկսել է աշխատել գրեթե անմիջապես, կամ երկիր ժամանելուց հետո

առավելագույնը 30 օրվա ըմբացքում (53.6% և 29.8% համապատասխանաբար): Միգրանտների 9.1%-ը աշխատանք է գտել 1-3 ամսում և միայն 2.9% դեպքերում աշխատանքի տեղափորկելը պահանջել է ավելի երկար ժամանակ: Միգրանտների 3.3%-ն այդպես էլ աշխատանք չի գտել:

Ինչպես արդեն նշվել է, նախքան աշխատանքային միգրացիայի մեջ ներգրավվելը, զբաղված միգրանտների մեծամասնությունը Հայաստանում մշտական աշխատանք է ունեցել, մինչդեռ արտերկրում աշխատանքը մեծամասամբ (դեպքերի 53.7%-ում) պատահական բնույթ է կրել:

Աշխատանքային միգրանտների զբաղվածության ամենատարածված ոլորտը շինարարությունն է՝ 2/3-ը աշխատում էին այս բնագավառում: Հաջորդ, թեև 6 անգամ ավելի հազվադեպ նշված, ոլորտներն են առևտուրը, հասարակական սննդուրը և ծառայությունները: Աղյուսակ 4-2-ը համեմատում է միգրանտների զբաղվածության ոլորտները Հայաստանում և ուղևորության երկրներում:

#### *Աղյուսակ 4-2 Զբաղվածության ոլորտները*

Ոլորտ	Արտերկրում	Հայաստանում
Շինարարություն	62,0	16,3
Առևտուր/հասարակական սննդ	11,5	15,4
Ծառայություններ	10,6	22,9
Արտադրություն	7,2	9,3
Տրանսպորտ	3,4	6,6
Արվեստ	1,4	2,2
Գիտություն	0,7	2,2
Կրթություն	0,2	4,4
Գյուղատնտեսություն	0,0	15,9
Այլ	3,0	4,8
<b>Ընդամենը</b>	<b>100,0</b>	<b>100,0</b>

Ուղևորության երկրում միգրանտների 72.8%-ն ունեցել է բանվորի կարգավիճակ, ինչը երկու անգամ զերազանցում է մինչև մեկնելը Հայաստանում աշխատանք ունեցող միգրանտների թվում բանվորների տոկոսը: Սրա հաշվին է, որ դեկավարների, ծառայողների և ինքնազբաղվածների թիվը ուղևորության երկրներում շատ ավելի քիչ է (1.5, 2 և 5 անգամ համապատասխանաբար):

Միգրանտների **աշխատանքային օրվա միջին տևողությունը** 10.5 ժամ է: Միգրանտների մեծամասնությունն աշխատել է լրիվ աշխատանքային դրույքով (8-10 ժամ), կամ 12-ժամյա հերթափոխով (34.1% և 33.4% համապատասխանաբար): 5.6%-ն աշխատել է ոչ լրիվ դրույքով (1-7 ժամ)

իսկ 8.0%-ը՝ օրական 12 ժամից ավելի: Աշխատանքային միգրանտներից միայն 43.9%-ն է ունեցել կանոնավոր **հանգստյան օրեր**: 22.5%-ին հանգտյան օրեր են տրամադրել հազվադեպ, իսկ յուրաքանչյուր չորրորդ միգրանտն ընդհանրապես հանգստյան օր չի ունեցել:


Այս ամենի ամենահավանական բացատրությունն այն է, որ աշխատանքային միգրանտների միայն 11.5%-ն է գործառուների հետ գրավոր **պայմանագիր** կնքել, իսկ դեպքերի ճնշող մեծամասնությունը (72.3%) գործառուների հետ հարաբերությունները հիմնված են եղել բանավոր պայմանավորվածության վրա: Այս պատճառով է հավանաբար, որ յուրաքանչյուր երրորդ դեպքում գործառուն կամ ընդհանրապես չի պահպանել նախնական պայմանավորվածությունը, կամ էլ պահպանել է այն միայն կիսով չափ: Ավելին, միգրանտների 11.9%-ը խստովանել է, որ աշխատանքային հարաբերությունները ոչ մի կերպ կանոնակարգված չեն եղել (նոյնիսկ բանավոր համաձայնությամբ), և հետևաբար կողմերը միմյանց հանդեպ որևէ պարտավորություններ չունեին:

Անդրադառնալով միգրանտների **Վարձատրությանը՝ առաջին հերթին հարկ** է նշել, որ ամսեկան եկամուտին վերաբերող հարցին պատասխան է տվել հարցողների 65.2%-ը, հետևասպես մեր հետագա գնահատումը հիմնված է 454 աշխատանքային միգրանտներից 296-ի տված տեղեկությունների վրա:

Միգրանտների մեծամասնությունը (58.8%) վաստակել է ամսեկան 250-500 ԱՄՆ դոլար, և գրեթե 1/4-ը՝ 250 դոլարից պակաս: 16.9%-ի միջին ամսեկան եկամուտը գերազանցել է 500 դոլարը:

Միգրանտների միջին հաշվարկված ամսեկան եկամուտը կազմում է 410 ԱՄՆ դոլար, ընդ որում, նվազագույնը՝ 100 և առավելագույնը՝ 1500 դոլար: Թեև միջին եկամուտը բացարձակ առումով 4 անգամ ավելի բարձր է, քան միգրանտները

**Գծապատկեր 4-3 Միգրանտների ամսեկան աշխատավարձը Հայաստանում և արտերկրում**




ստանում էին Հայաստանում, հարաբերական առումով այն իհարկե այնքան էլ բարձր չէ: Եթե հաշվի առնենք ուղևորության կարծ տևողությունը, ապա թվում է, թե 400-500 ԱՄՆ դոլար եկամուտով միգրանտներն ի վիճակի կլինեին միայն ետ վերաբարձնել պարտքերը (եթե այդպիսիք կան), ծածկել ճանապարհածախսն ու հոգալ ընթացիկ ծախսերը, որոնք նույնիսկ Ռուսաստանում շատ ավելի բարձր են, քան Հայաստանում: Այս հանգամանքը կարող է իրոք աշխատանքային միգրացիայի տնտեսական արդյունավետությունը կասկածի տակ դնել, եթե իհարկե միգրանտների իրական եկամուտները չեն թերագնահատվել:

### **Դրամական փոխանցումներ**

Հարցվողների 18.8%-ը հավաստում էր, որ իրենց միգրանտ հարազատները երբեք տնային տնտեսությանը գումար չեն ուղարկել: Այն միգրանտների մեծամասնությունը, ովքեր իրենց ընտանիքին ֆինանսավես աջակցելու ուղիներ այնուամենայնիվ գտել են (55.7%), իրենց վերջին այցի ընթացքում գումար են ուղարկել 2-6 անգամ:

Միգրանտների մեծամասնությունը (70.9%) առաջին անգամ կարողացել է ընտանիքին գումար ուղարկել մեկնելուց հետո 2 ամսվա ընթացքում: Յուրաքանչյուր հինգերորդ միգրանտ իր առաջին տնտեսումն ուղարկել է 3-6 ամսվա ընթացքում և միգրանտների միայն 4.6%-ն է առաջին անգամ դրամական փոխանցում կատարել մեկնելուց ավելի քան 6 ամսից հետո: Հարցման արդյունքում գրանցված միջին ժամանակահատվածը 2.4 ամիս է:

Դրամական փոխանցումների ամենատարածված եղանակը բանկային փոխանցումն էր. արտասահման իրենց վերջին ուղևորության ընթացքում միգրանտների 84.8%-ը օգտվել է բանկային ծառայություններից: Ի հակադիր՝ տնային տնտեսությունների միայն 21.0%-ն է կանխիկ գումար ստացել այլ անձանց միջոցով: Միգրանտների կեսից ավելին (54.3%) գումարը բերել է իր հետ:



Մեր կարծիքով, բանկային փոխանցումների գերակշռությունը պայմանավորված է Հայաստանի բանկային համակարգի և հատկապես Հայաստանի և ԱՊՀ երկրների միջև բանկային փոխանցումների համակարգի բարելավումներով: Ներկայումս բանկերի մեծ մասը երաշխավորում է զումարի վայրկենական փոխանցում ընդամենը 1% տոկոսադրույթով: Այս արագ և մատչելի ծառայությունները բոլոր են տալիս միգրանտներին խուսափել անցանկալի անհանգստությունից՝ կապված գումարը պետք եղած ժամանակ Հայաստան հասցնելու համար հուսալի մարդ գտնելու, կամ էլ մինչ Հայաստան վերադառնալը ընտանիքներին առանց ֆինանսական օգնության բողնելու հետ: Նշված ենթադրությունները հիմնավորվում են միգրանտների կողմից բանկային ծառայությունների գնահատմամբ: Գրեթե բոլոր հարցվածները բավարարված են բանկային փոխանցման արագությամբ (96.4%), վատահելիությամբ (97.4%) և ծառայությունների արժեքով (95.8%):

Հարցման արդյունքների համաձայն, վերջին ուղևորությունից յուրաքանչյուր միգրանտի ուղարկած/բերած միջին գումարն ընդհանուր առմամբ կազմել է 1540 ԱՄՆ դոլար: Այս թիվը նույնապես կարող է բերագնահատված լինել, սակայն, մեր կարծիքով, այն ավելի մոտ է իրականությանը, քան միգրանտների՝ ամսեկան եկամուտի վերաբերյալ տվյալները: Իսկապես, շատ հակասական է թվում տիպական աշխատանքային միգրանտը, որի ամսեկան միջին եկամուտը 400 ԱՄՆ դոլար էր 9 ամսի միջին տևողությամբ ուղևորության ընթացքում, դժվար թե կարողանար տնտեսել միջինում 1540 ԱՄՆ դոլար, քանի որ դա կնշանակեր, որ նա ապրուստի վրա ծախսել է ամսեկան 200 դոլարից ելքից գումար՝ նույնիսկ անտեսելով ճանապարհածախսն ու պարտքերի վերադարձը (Եթե այդպիսիք եղել են):

Եթե բազմապատկենք հաշվարկված 1540 ԱՄՆ դոլարը վերջին 3 տարիների ընթացքում յուրաքանչյուր միգրանտի կատարած ուղևորությունների միջին թվով (1.8), ապա յուրաքանչյուր տնային տնտեսության ստացած միջին եկամուտը կազմել է 2772 ԱՄՆ դոլար: Սա թույլ է տալիս գնահատել 2002-2005 թթ. միջև ընկած ժամանակահատվածում եթենույն ճշգրիտ, ապա գոնեն նվազագույն ֆինանսական ներհոսքը Հայաստան՝ աշխատանքային միգրացիայի շնորհիվ. 260-330 միլիոն ԱՄՆ դոլար՝ կախված միգրանտների բացարձակ թվից (չհաշված «անհաջող» ուղևորությունների 18.8%-ը), կամ տարեկան միջինում 100 միլիոն ԱՄՆ դոլար: Հետաքրքիր է, որ տարեկան կտրվածքով ֆինանսական ներհոսքի միևնույն ծավալն է արձանագրվել 1996 թ.-ին «ՀՀ բնակչության միգրացիան հետխորհրդային ժամանակահատվածում» հետազոտության զեկույցում (զեկույցը վերաբերում է 1991-1995 ժամանակահատվածին):<sup>17</sup> Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ նշված հետազոտությունը վերաբերում էր արտաքին միգրացիոն գործններին ընդհանրապես, գնահատված ներհոսքն ամբողջությամբ աշխատանքային միգրանտների կողմից չէր ապահովվում:

<sup>17</sup> «ՀՀ բնակչության միգրացիան հետխորհրդային ժամանակահատվածում», Պրոֆ. Ս. Կարապետյանի անկախ հետազոտական խումբ, Երևան, 1996, էջ 31 (աղբյուրը՝ Ռ. Եղանյան, Ն. Շահնազարյան, «Աշխատանքային էմիգրացիան Հայաստանից. գրականության ակնարկը», Երևան, 2004)

### **Բնակելի պայմանները**

Արտասահմանում աշխատելիս միգրանտների մեծամասնությունը (38.5%) բնակարան էր վարձում: Ընդ որում, 28.9%-ը վարձում էր առանձին կացարան, իսկ 9.6%-ը այս կիսում էր ընկերների կամ բարեկամների հետ: Բնականաբար Եվրոպայում և ԱՍԴ-ում բնակարանի վարձակալությունն ավելի տարածված է. հայ աշխատանքային միգրանտների կեսից ավելին այդ երկրներում բնակարան էր վարձում կամ մենակ (41.0%), կամ ընկերների հետ (15.0%):

Յուրաքանչյուր երրորդ հայ աշխատանքային միգրանտ (30.3%) ապրում էր կամ իր աշխատանքի վայրում (գրասենյակ, գործարան և այլն), կամ բարաբներում: Հարկ է նշել, որ նման պայմաններում ապրող միգրանտների 99.2%-ն աշխատել է ՌԴ-ում:

Մեկ այլ տարածված տարբերակ է ուղևորության երկրում բնակվող բարեկամների և ընկերների տանն ապրելը: Վերջինս ընտրվել է ընդհանուր առմամբ միգրանտների 20.6%-ի, Ռուսաստանում՝ 19.2%-ի և այլ երկրներում՝ գրեթե 32%-ի կողմից: Որոշ միգրանտներ բնակվել են հանրակացարաններում (6.7%) կամ գործատուների տանը (3.8%):

### **Աղյուսակ 4-3 Բնակավայրի տիպը**

Տարբերակ	Տոկոս
Վարձել է առանձին բնակարան	29.0
Ապրել է աշխատավայրում կամ բարաբներում	27.5
Ապրել է բարեկամների տանը	20.5
Բնակարան է վարձել ընկերների հետ	9.6
Ապրել է հանրակացարանում	6.7
Ապրել է գործատուի տանը	3.8
Ունի սեփական բնակարան	0.9
Այլ	0.4
Դժվարացել է պատասխանել	1.6
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>

Միգրանտների մեծամասնությունը բավարարված էր կացարանային պայմաններով: Բացի այդ, ինչպես կարելի էր ենթադրել, նրանք, ովքեր աշխատել են ԱՍԴ-ում և Եվրոպայում, իրենց բնակարանային պայմաններն ավելի բարձր են գնահատել, քան նրանք, ովքեր մեկնել էին Ռուսաստան և ԱՊՀ այլ երկրներ:

Համեմատելով ուղևորության երկրում միգրանտների կացարանային պայմանները Հայաստանի պայմանների հետ՝ հարցվողների մեծամասնությունը (53.2%) փասել է, որ ընդունող երկրում պայմաններն ավելի լավն էին: Ինչպես և սպասվում էր, այս խումբը հիմնականում կազմում են նրանք, ովքեր ապրել են բարեկամների տանը կամ առանձին բնակարան են վարձել: Միգրանտների 31.1%-ը կարծում է, որ ընդունող երկրում պայմաններն ավելի վատն էին, իսկ 11.3%-ը նշել է, որ պայմանները նույնն էին, ինչ Հայաստանում:

### **Հիմնախնդիրները**


Միակ երկրները, որտեղ հարցված միգրանտները հանդիպել են որոշակի խնդիրների ԱՄՆ-ն և Ռուսաստանն են (3.3% և 96.7% համապատասխանաբար): Այնուամենայնիվ, հաշվի առնելով ԵՄ և ԱՊՀ առանձին երկրներ մեկնած հարցվողների փոքր թիվը, չի կարելի պնդել, որ հայազգի միգրանտներն այդ երկրներում որևէ խնդիրների չեն հանդիպում:

Քանի որ ԱՄՆ-ում միգրանտների բացարձակ թիվը նույնպես բավարար չէ որևէ ընդհանրացում անելու համար, այս բաժնում կնկարագրենք միայն այն հիմնախնդիրները, որոնց հետ աշխատանքային միգրանտները բախվել են Ռուսաստանում:

Հարցվողների կողմից նշված խնդիրները կարելի է բաժանել 3 խմբի. ա) բյուրոկրատական խնդիրներ՝ (ժամանակավոր գրանցման գործընթաց, ուսումնական կողմից կաշառքի պահանջ, փաստաթղթերի հաճախակի ստուգում), բ) խնդիրներ՝ կապված աշխատանքի հետ (աշխատանք գտնելու դժվարություններ, նախապես պայմանավորվածից քիչ վարձատրություն), և գ) պետական մարմինների և տեղի բնակչության բացասական վերաբերմունք: Ընդ որում, 51-65 տարեկան միգրանտների մեծ մասը խնդիրներ է ունեցել՝ կապված աշխատանքի հետ, իսկ ավելի երիտասարդ միգրանտները հաճախակի հանդիպել են բյուրոկրատական խոչընդուների:

### **Տեղական իշխանությունների և քնակչության վերաբերմունքը**

Միգրանտների մեծամասնությունը (52.5%) գտնում է, որ իրենց նկատմամբ տեղական իշխանությունների վերաբերմունքը դրական էր կամ ընդունելի: Միգրանտների միայն 2.0%-ն է պնդել, որ իշխանություններն իրենց



նկատմամբ թշնամարար էին տրամադրված: Ընդ որում, քավականին բնական է, որ կառավարությունն ու ղեկավար մարմինները ավելի բացասարար էին տրամադրված նրանց նկատմամբ, ովքեր խախտել էին գրանցման կանոնները:

Համեմատած իշխանությունների վերաբերմունքի հետ, միզրանտներն ավելի բարձր են զնահատել երկրի բնակչության վերաբերմունքը: 46.5%-ը կարծում է, որ տեղի բնակչությունը հայազգի միզրանտներին դրական է վերաբերվում, 28.6%-ը հասարակական վերաբերմունքը բավարար է զնահատել, իսկ 18.7%-ի կարծիքով բնակչության վերաբերմունքը չեզոք է: Ընդ որում, հարկ է նշել, որ ըստ հարցման արդյունքների, ընդունող երկրների բնակչություն ավելի լավ վերաբերմունք ունեն կին միզրանտների նկատմամբ, քան տղամարդկանց:

## **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՀԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԹՐԱՖԻՔԻՆԳ**

Փորձելով զնահատել աշխատանքային միզրացիայի որոշ բացասական դրսևումների տարածվածությունը՝ խնդրել ենք հարցվողներին հիշել իրենց ընկերների, հարազատների և ծանոքների հետ տեղի ունեցած իրական դեպքեր, երբ նրանք, խարեւոթյամբ արտասահման տեղափոխվելով, ենթարկվել են աշխատանքային շահագործման կամ ստիպված են եղել զրադվել մարմնավաճառությամբ:

250 հարցվողներ (14.3%) մտաբերել են աշխատանքային շահագործման դեպքեր, իսկ 3.1%-ը (54 հարցվող) նշել է կանանց սեռական բրաֆիքինգի դեպքեր: Թերևս բնական է, որ աշխատանքային շահագործման դեպքեր հիշած հարցվողների մեծամասնությունը պատկանում է այն ընտանիքներին, որոնք ներգրավված են եղել աշխատանքային միզրացիայի գործընթացում: Ավելին, Շիրակում, ուր միզրացիոն ակտիվությունն ամենաբարձրն է, գրեթե յուրաքանչյուր երրորդ հարցվող պնդում էր, որ իրեն հայտնի են արտերկրոս հայերի աշխատանքային շահագործման դեպքեր: Այս արդյունքները, այնուամենայնիվ, չեն կարող վերածվել նույնիսկ մոտավոր բացարձակ թվերի, քանի որ շատ դեպքերում խոսքը կարող էր գնալ բրաֆիքինգի միևնույն զոհերի մասին (հատկապես երբ խոսքը վերաբերում է փոքր բնակավայրերին):

---

## **ԳԼՈՒԽ 5. ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՊԱՏճԱՌՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

---

Բացի օրյեկտիվ փաստերն ու տվյալները ներկայացնելուց, անհրաժեշտ է նաև ուսումնասիրել միգրանտների և նրանց ընտանիքների անդամների՝ աշխատանքային միգրացիայի պատճառների և հետևանքների սուբյեկտիվ բնկալումը։ Այս գլուխը նվիրված է երևոյթի գնահատմանը՝ հարցվողների աչքերով։

### **ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ**

---

Հետազոտության արդյունքները վկայում են, որ աշխատանքային միգրացիայի հիմնական պատճառները Հայաստանում աշխատանքի հետ կապված հիմնախնդիրներն են (96.9%): Այդ թվում, հարցվողների 51%-ը նշել է աշխատատեղերի բացակայությունն առհասարակ, 43.0%-ը՝ բավարար վարձատրվող աշխատատեղերի պակասը, իսկ 2.9%-ը՝ իրենց մասնագիտությամբ աշխատատեղերի բացակայությունը։ Բոլորովին զարմանալի չեր, որ 454 աշխատանքային միգրանտներից միայն 12-ն են բոնել միգրացիայի ճամապարհը այլ պատճառներով, ինչպիսիք են, օրինակ, անառողջ բարոյահոգեբանական մքնոլորտը կամ ոչ կայուն քաղաքական իրավիճակը։

Հետաքրքիր էր նկատել, որ միջին տարիքի միգրանտները հիմնականում հաշվի են առել աշխատավարձի գործոնը, իսկ 21-30 և 51-ից բարձր տարիքային խմբերի միգրանտների մեծամասնությունը մեկնել էր Հայաստանից, որովհետև ընդհանրապես ի վիճակի չեն եղել աշխատանք գտնել։ Այս արդյունքը կարելի է բացատրել նրանով, որ Հայաստանում միջին տարիքի բնակչության զբաղվածության մակարդակն ընդհանուր առմամբ ավելի բարձր է։ Միջին տարիքի մարդկանց նկատմամբ աշխատաշուկայում ավելի մնձ պահանջարկը ռացիոնալ հիմքեր ունի. Երիտասարդները հիմնականում չունեն բավարար փորձ, իսկ տարեցներն այնքան էլ լավ չեն տիրապետում ժամանակակից շուկայում կողմից պահանջվող ունակություններին։ Ահա թե ինչու միջին տարիքի բնակչությունը նախընտրում է գտնել «լավ» աշխատանք, քան պարզապես ընդլայնել աշխատանքային փորձը։

Նոյն ենթադրությամբ կարելի է հիմնավորել նաև այն, թե ինչու բարձրագույն կրթությամբ և գիտական աստիճանով միգրանտներն աշխատաշուկայից ավելի բարձր ակնկալիքներ ունեն։ Պարզվում է, որ վերջիններիս 55.1%-ը Հայաստանից հեռացել է անբավարար վարձատրության պատճառով, մինչդեռ ավելի ցածր կրթական մակարդակ ունեցող միգրանտների մեծամասնությունն ընդհանրապես Հայաստանում աշխատանք չեր կարողացել գտնել։

Աշխատանքային միգրացիայի լրացուցիչ պատճառների շարքում հարցվողները նշել են Հայաստանի զարգացման հեռանկարների բացակայությունը (9.4%), գործարարությամբ զբաղվելու խոչընդոտները (9.4%), անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտը (5.6%) և ոչ կայուն աշխարհաքաղաքական իրավիճակը (0.7%):

Հաշվի առնելով երկրից ցածր աշխատավարձի պատճառով մեկնող միգրանտների ստվար զանգվածը, անհրաժեշտ ենք համարել գնահատել նրանց նվազագույն պահանջները ամսեկան վարձատրության չափի վերաբերյալ: Պարզվում է, որ ամսեկան միջին եկամուտը, որի դեպքում միգրանտն այլևս չի մեկնի արտասահման աշխատելու, կազմում է 337 ԱՄՆ դոլար, ինչը մոտավորապես 10 անգամ գերազանցում է ՀՀ կառավարության կողմից ներկայումս սահմանված աշխատավարձի մինիմալ չափը:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Միգրանտների մեծամասնությունը հավաստել է, որ վերջին ուղևորությունը մասամբ արդարացրել է իրենց սպասումները (63.7%), իսկ 12.3%-ն ուղևորությունից լիովին բավարարված է: Միաժամանակ յուրաքանչյուր հինգերորդ միգրանտի սպասումներն ընդհանրապես չեն արդարացել: Ընդորում միգրանտների 79.5%-ն ուրիշներին խորհուրդ կտար մեկնել արտասահման աշխատելու:

Ինչ վերաբերում է միգրանտների ընտանիքների անդամների գնահատականներին, ապա դրանք պայմանավորված են յուրաքանչյուր երրորդ ընտանիքի սկզբնական ակնկալիքները չեն արդարացել, ուստի հարազատները պնդում են, որ միգրանտների՝ արտասահմանում աշխատել շարունակելու անհմաստ է:

Հարցվողների կարծիքով, այն փաստը, որ իրենց ընտանիքի անդամները ժամանակավորապես աշխատում են արտասահմանում, իրականում չի ազդում ընտանիքի կառուցվածքի վրա: Մեծ մասամբ նրանք կարծում են, որ եթե միգրանտները մնային Հայաստանում, երեխաների և ամուսնացածների թիվը նույնը կլիներ: Սա բավականին տրամաբանական է, եթե հաշվի առնենք, որ միգրանտների մեծամասնությունը 41-50 տարեկան ամուսնացած տղամարդիկներն են: Ինչ վերաբերում է ավելի երիտասարդ միգրանտներին, միգրացիայի ժամանակավոր բնույթը, թերևս, չի խանգարում նրանց ամուսնանալ և երեխա ունենալ: Նման իրավիճակների Հայաստանում կարելի է հանդիպել շատ հաճախ:

Ի տարբերություն վերը նշվածի, հարցվողների մեծամասնությունը (76.1%) հավատացած է, որ իրենց ընտանիքը ֆինանսապես ավելի վատ վիճակում կլիներ, եթե իրենց հարազատների մեջ չինեին աշխատանքային միգրանտներ: Հարցվողների մնացած 1/4-ը, կարծում է, որ ֆինանսական դրությունը

հավանաբար կլիներ նոյյալ (19.5%), կամ նույնախսկավելիլավ (3.1%): Այս իմաստով նշանակալի կապ է հաստատվել հարցվողների կարծիքների և միզրանտների կողմից վերջին ուղևորության ընթացքում դրամական փոխանցումների ծավալի միջև: Այն տնային տնտեսությունները, որոնք կարծում են, որ աշխատանքային միզրացիան տնտեսապես արդյունավետ է, միզրանտի վերջին ուղևորության շնորհիվ ստացել են միջինում 1637 ԱՄՆ դոլար, մինչդեռ նրանք, ովքեր կասկածներ են հայտնում միզրացիայի տնտեսական հիմնավորվածության մասին, ստացել են միջինում 4 անգամ պակաս եկամուտ (մոտ 400 դոլար):

Հարցվողները տարբեր կարծիքներ արտահայտեցին ընտանիքի բարոյահոգերանական մթնոլորտի վրա աշխատանքային միզրացիայի ազդեցության վերաբերյալ: Այնուամենայնիվ, պատասխանների բաշխումը խոսում է այն մասին, որ միզրացիան ընտանիքում տիրող մթնոլորտի վրա պելի շուտ դրական կերպով է անդրադարձել: Միզրացիայի ազդեցությունը բացասական գնահատողների հարաբերությունը դրական գնահատական տվյալներին մոտավորապես 1:3 է (կամ 17.3%-ը 40.3%-ի):

Առաջին տեսակետի ամենահավանական բացարձությունն այն է, որ թեկուզ կարճ ժամանակով՝ ընտանիքը մասնատվում է: Այս փաստարկը հիմնավորվում է նրանով, որ այս հարցում հարցվողների դիրքորոշումը կախված է միզրանտների ուղևորության միջին տևողությունից. այն դեպքերում, երբ հարցվողների կարծիքով միզրացիան բարենպաստ կերպով է ազդել ընտանիքի ընդհանուր մթնոլորտի վրա, միզրանտների աշխատանքային ուղևորությունը տևել է 8 ամսից պակաս: Ի հակակշիռ՝ այն միզրանտները, որոնց ընտանիքները մտահոգված են միզրացիայի բացասական հոգեքանական հետևանքներով, արտասահմանում անցկացրել են միջինում 10.5 ամսի:

Միաժամանակ հարցվողների գնահատականը կախված է նրանից, թե արդյո՞ք մինչև արտասահման մեկնելը միզրանտը Հայաստանում ունեցել է աշխատանք: Պարզվում է, որ միզրացիայի դրական ազդեցությունը փաստող ընտանիքների 60%-ի դեպքում միզրանտները գործազուրկ են: Խսկապես, գործազրկությունը, ֆինանսական միջոցների սակավությունը և ապրուստի միջոցների տևական որոնումը կարող են ընտանիքի բարոյական վիճակին շատ պելի մեծ վնաս հասցնել, քան որոշ ժամանակով ընտանիքից հեռու գտնվելը:

Աշխատանքային միզրացիայի սոցիալական հետևանքներից մեկը կարող է լինել հասարակական կապերի բուլացումը. հարցվողների մոտավորապես 1/3-ի հավաստմամբ, ընտանիքի որոշ անդամների միզրացիայի պատճառով նրանք իրենց ընկերների, բարեկամների, ծանոքների հետ ավելի քիչ են շփում: Այս իրավիճակը կարող է վերագրվել աշխատանքային միզրանտների սեռատարիքային կառուցվածքին: Նրանց մեծամասնությունը երիտասարդ կամ միջին տարիքի տղամարդիկ են, որոնք հավանաբար հանդիսանում են ընտանիքը հասարակության հետ կապող ամենաուժեղ օղակը:

---

## **ԳԼՈՒԽ 6. ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊՈՏԵՆՑԻԱԼԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

---

Հետազոտության արդյունքների հիման վրա՝ այս գլխում կանչառատեսվում են Հայաստանի բնակչության ներքին և արտաքին միզրացիոն հոսքերը 2005 թ.-ին՝ ներաշաղ ժամանակավոր և մշտական էմիգրացիան: Ստացված տվյալները երկրի բնակչության վրա հնարավորին ճշգրիտ տարածելու համար, տվյալները վերցված են տնային տնտեսությունների հիմնական ներկայացուցչական ընտրանքից:

### **ՆԵՐՁԻՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊՈՏԵՆՑԻԱԼԸ**

---

Հետազոտված տնային տնտեսությունների անդամների 5.1%-ը կցանկանային փոխել իրենց ներկայիս բնակավայրը՝ ՀՀ-ի մեկ այլ բնկավայրում, հիմնականում Երևանում (3.0%), ապրելու և աշխատելու համար: Տնային տնտեսությունների անդամների 1.3%-ը ծրագրել էին տեղափոխվել արդեն իսկ 2005 թ.-ին, ընդ որում նրանց գրեթե կեսը (0.6%) տեղափոխվելու է Երևան: Բացարձակ թվի վերածելով՝ սա նշանակում է, որ Հայաստանի շրջանների մոտավորապես 13.000 բնակիչներ այս տարի ամենայն հավանականությամբ կհաստատվեն Երևանում:

Մեր կարծիքով, բնակչության՝ մայրաքաղաք տեղափոխվելու ձգումը պայմանավորված է թե՛ օրյեկտիվ և թե՛ սուրյեկտիվ գործոններով: Երևանը, իհարկե, հաճրապետության մյուս բնակավայրերից առանձնանում է իր ապրելակերպով և հնարավորություններով, սակայն կենսամակարդակի կտրուկ տարրերության վերաբերյալ բնակչության պատկերացումն այդքան էլ չի համապատասխանում իրականությանը:

Ըստ հարցման արդյունքների, միզրացիոն հոսքը դեպի Երևան հիմնականում կձևավորեն մայրաքաղաքին մոտ գտնվող շրջանների՝ Արագածոտնի, Արարատի և Կոտայքի բնակիչները (66.7%), իսկ ավելի փոքր մասը կկազմեն աղեսի գոտու՝ Լոռու և Շիրակի բնակիչները (33.3%):

Երևան տեղափոխվողների մյուս առանձնահատկությունն այն է, որ նրանց մեծամասնությունը 34 տարեկանից երիտասարդ է և ներկայացնում է միջինից ցածր կենսամակարդակ ունեցող ընտանիքները:

### **ԱՐՏԱԶՔԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՆԴԵՊ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՄԸ**

---

#### **Մշտական էմիգրացիայի հանդեպ վերաբերմումը**

Հարցվողներին խնդրել էինք հայտնել իրենց վերաբերմունքն այն հայրենակիցների նկատմամբ, ովքեր լրում են Հայաստանը՝ արտերկրոս մշտական բնակություն հաստատելու նպատակով: Կիրառվել է 1-4 բալանց

սանդղակ, որտեղ 1-ը նշանակում էր բացասական, 2-ը՝ ավելի շուտ բացասական, 3-ը՝ ավելի շուտ դրական և 4-ը՝ դրական վերաբերմունք: Արդյունքը եղավ այն, որ հստակ բացասական դիրքորոշում ցոյց տվեց հարցվողների 39.8%-ը (ամենամեծ խումբը), ինչը մոտավորապես 1.5 անգամ զերազանցում է դրական վերաբերմունք ունեցող հարցվողների տոկոսը: Այնուամենայնիվ, «ավելի շուտ դրական» և «ավելի շուտ բացասական» դիրքորոշումները համապատասխան թևենների հետ միավորելիս պարզվում է, որ երևոյթը դատապարտողների տոկոսը մշտական միգրացիային դրական վերաբերմունք ունեցողների տոկոսից այնքան էլ բարձր չէ (52.8% և 44.8% համապատասխանաբար): Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ հայ հասարակությունը հակված է երևոյթին բացասաբար վերաբերվել, սակայն ոչ ծայրահեղ կերպով:

Պարզելու համար, թե բնակչության որ խմբերն ունեն այս կամ այն դիրքորոշումը, մենք հարցվողների վերաբերմունքը համարդել ենք նրանց սեռի, կրթության, բնակավայրի տիպի, ընտանիքում միգրանտի առկայության կամ բացակայության, ինչպես նաև տնային տնտեսության կենսամակարդակի փոփոխականների հետ:

Ինչպես սպասվում էր, ամենահաստատուն կազմը նկատվում է տնային տնտեսությունների վերաբերմունքի և միգրացիոն գործընթացի հետ նրանց առնչության միջև: Ի տարբերություն հարցվողների մյուս խմբի, այն ընտանիքները, որոնք ներառված են աշխատանքային միգրացիայի գործընթացում, մշտական միգրացիային հիմնականում դրական կերպով են վերաբերվում (54.9%): Այս արդյունքը շատ կարևոր է, քանի որ հիմք է տալիս կարծելու, որ հարցված տնային տնտեսությունների մեծամասնությունը չի առարկի, եթե իրենց ընտանիքի անդամները, որոնք արտասահման են մեկնել ժամանակավոր աշխատանքի, վերջին հաշվով որոշեն մնալ ուղևորության երկրում:

Բացի այդ, պարզվում է, որ կանայք երկրից մշտապես հեռացողների նկատմամբ պակաս հանդուրժող են, քան տղամարդիկ: Բացասական դիրքորոշում է արտահայտում կանաց 54.5%-ը, մինչդեռ տղամարդիկ բաժանվել են գրեթե հավասար խմբերի՝ 49.8%-ու ունի բացասական վերաբերմունք և 50.2%-ը՝ դրական:

Գրեթե նոյն բաշխմանն ենք ականատես լինում գյուղական և քաղաքային բնակչության վերաբերմունքը համենատելիս. Վերջինս պակաս քննադատորնեն է մոտենում մշտական միգրացիային (բացասական վերաբերմունք ունի քաղաքային բնակավայրերում հարցվածների 50.7%-ը, իսկ գյուղական համայնքներում՝ 55.7%-ը): Այս արդյունքը բավականին բնական է, եթե հաշվի առնենք, որ քաղաքային շրջանների միգրացիոն ակտիվությունը շատ ավելի բարձր է, քան գյուղական շրջաններինը:

Հետաքրքիր տարակարծություն կա միջնակարգից ցածր կրթությամբ և գիտական աստիճան ունեցող հարցվողների միջև: Եթե առաջին խմբի միայն

30%-ն է արդարացնում մշտական էմիգրանտներին, երկրորդ խմբի ճնշող մեծամասնությունը (85.8%) դրական վերաբերմունք ունի միգրացիայի այս տիպի հանդեպ:

Տարրեր սոցիալական դասերի վերաբերմունքը վերլուծելիս՝ պարզվեց, որ բարձր կենսամակարդակով ընտանիքները մշտական միգրացիայի հանդեպ անտարբերություն են ցուցաբերում. այս խմբում թե՛ դրական, թե՛ բացասական դիրքորոշումների կշիռը նոյնն է (50%): Սա կարող է պայմանավորված լինել տարրեր կենսամակարդակ ունեցող ընտանիքների միգրացիոն ակտիվությամբ. ինչպես արդեն նշել ենք նախորդ գլուխներում, միջինից բարձր կենսամակարդակ ունեցողները հակված են ցուցաբերելու ցածր միգրացիոն ակտիվություն:

### **Աշխատանքային էմիգրացիայի հանդեպ վերաբերմունքը**

Ի տարբերություն մշտական էմիգրացիայի գնահատման հարցում հասարակական տարածայնությանը, հարցվողները գրեթե համախոհ են աշխատանքային միգրացիայի գնահատականներում: Աշխատանքային միգրացիան հարցվողների մեծամասնությունը (58%) գնահատում է իբրև դրական երևոյթ և 28.4%-ը՝ ավելի շուտ դրական երևոյթ, ինչը նշանակում է, որ բնակչության ճնշող մեծամասնությունը (86.4%) այն համարում է ընդունելի և ողջունելի երևոյթ: Ցուրաքանչյուր տասը հարցվողներից միայն մեկն է դատապարտում նրանց, ովքեր աշխատանքի հնարավորություն են փնտրում արտասահմանում:

Այժմ անդրադառնանք մասնավորապես կանանց աշխատանքային միգրացիայի վերաբերյալ հարցվողների կարծիքների քննարկմանը: Պարզվում է, որ ՀՀ բնակչության ճնշող մեծամասնությունը (78.1%) դեռևս շատ անհանդուրժողական վերաբերմունք ունի կանանց միգրացիայի նկատմամբ: Հարցվողներն իրենց բացասական դիրքորոշումը իմմնավորել են մի շարք հանգամանքներով: Ամենահաճախակի հնշած մեկնարանությունները հետևյալն են. արտասահմանում աշխատանք փնտրելը հակասում է հայ կնոջ կերպարին (20.6%), կանայք շաբետը է հեռանան երկրից (20.5%), կամ նույնիսկ կանայք ընդհանրապես չափետք է աշխատեն (13.8%):

Մյուս տարածված կարծիքն այն է, որ արտերկիր մեկնող կանանց մեծ մասը զրադարձում է մարմնավաճառությամբ (10.4%): Այնուամենայնիվ, մենք հակված ենք կարծել, որ վերջին փաստարկն ավելի շուտ հիմնաված է սուբյեկտիվ ստերեոտիպերի, քան իրական կյանքից վերցված դեպքերի վրա:

Կանանց միգրացիային դեմ արտահայտված հարցվողների այլ պատճառաբանումների թվում կարելի է նշել այն, որ կանանց միգրացիան քայլայում է ընտանիքը, որ կինը շաբետը է մենակ գնա արտասահման, և որ կանայք կարող են աշխատանք գտնել նաև Հայաստանում (2.3%):

Կանաց աշխատանքային միգրացիայի հանդեպ դրական վերաբերմունք ունեցող փոքրամասնությունն ավելի շուտ հակված է արդարացնել իր կարծիքը, քան իրոք պաշտպանել այն: Նրանց 47.6%-ը կարծում է, որ կանայք կարող են աշխատել արտասահմանում, եթե ստիպված են ապրուստի միջոցներ հայրայթել, 19.1%-ի կարծիքով կանայք կարող են մեկնել արտասահման, եթե միայն Հայաստանում աշխատանք չեն կարողանում գտնել, 4.4%-ը նշում է, որ կանայք կարող են զնալ արտասահման, եթե լավ աշխատանքի առաջարկ ստանան, իսկ 3.9%-ը կարծում է, որ կանայք կարող են հեռանալ երկրից միայն իրենց ամուսինների հետ: Հետաքրքիր է, որ հարցվողների ընդամենը 6.4%-ն է հիշատակել մարդու իրավունքների համընդհանուր սկզբունքը՝ ասելով, թե յուրաքանչյուր ոք՝ անկախ սեռից, իրավունք ունի աշխատելու:

Այսպիսով մենք կարող ենք եզրակացնել, որ (ինչպես և այլ հարցերում) հայ հասարակության վերաբերմունքը աշխատանքային միգրացիային դեռևս խարսխված է մշակութային նորմերի և ավանդույթների, այլ ոչ թե երևոյթի հասարակական կամ տնտեսական հիմնավորվածության վրա:

## ԱՐՏԱԶԻՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊՈՏԵՆՑԻԱԼԸ

### Աշխատանքային էմիգրացիա

Հարցված տնային տնտեսությունների անդամների 6.9%-ը ցանկություն ունի մեկնել արտասահման՝ աշխատելու նպատակով:

Ինչ վերաբերում է իրական մտադրություններին, հարցման տվյալները վկայում են այն մասին, որ աշխատանքային միգրացիայի տեմպը 2005 թ.-ին շատ անգամ կզերազանցի 2002-2005 թթ. միգրացիայի տեմպի միջին տարեկան ցուցանիշները: Սա տեղի կունենա երկու հիմնական պատճառներով.

1. 2005թ.-ի փետրվարի դրությամբ Հայաստան վերադարձած միգրանտների մեծամասնությունը (77.5%), ծրագրել են մինչև տարվա վերջ կատարել ևս մեկ ուղևորություն: Այսպիսով, հերթական աշխատանքային այցով արտերկիր մեկնողների թիվը կկազմի 57,000-72,000 մարդ:
2. Միգրացիոն գործընթացը կընդգրկի նոր մասնակիցներ. գործընթացը կմերածի հարցված ընտանիքների ևս 8%-ը, որոնք 2002-2005 թթ. լնարացրում աշխատանքային միգրացիայում ներգրավված չեն եղել: Ընդհանուր առմանք, վերջին խմբին պատկանող ընտանիքների անդամների 1.8%-ը պլանավորում է 2005թ.-ին մեկնել արտասահման աշխատելու: Սա նշանակում է 48,000-68,000 նոր միգրանտների հոսք:

Ընդհանուր առմանք, ըստ մեր կանխատեսումների, 2005 թ.-ին հանրապետությունից՝ արտասահմանում իրենց բախտը փորձելու նպատակով կմեկնի 105,000-140,000 աշխատանքային միգրանտ (ՀՀ մշտական բնակչության 3.3-4.3%-ը):

Մեր կարծիքով, այն փաստը, որ այս գնահատականը 3 անգամ ավելի բարձր է, քան 2002-2005 թթ. միջին տարեկան ցուցանիշը, չպետք է մեկնարանվի իրեն աշխատանքային միզրացիայի տեմպի արմատական աճ: Առաջին հերթին, միզրացիայի թե՛ իրական, թե՛ պոտենցիալ տեմպի գնահատականը հիմնված է հարցվողների տրամադրած տեղեկությունների, այլ ոչ թե միզրացիոն ակտի փաստացի արձանագրման վրա: Հետևաբար իրական տեմպը կարող է բավականին թերագնահատված լինել, իսկ պոտենցիալ տեմպ՝ գերագնահատված, քանի որ մեր համոզմամբ ոչ բոլոր ծրագրավորված ուղևորություններն են ի վերջո իրականացվում: Վերջինս կարող է տեղի ունենալ թե՛ որոշ օրյեկտիվ հանգամանքների բերումով, և թե՛ այն պատճառով, որ հարցվողները կարող են հայտնել, որ իրենց հարազատները ծրագրում են մեկնել արտասահման, մինչեռ այդ պլաններն իրականում բավականին անորոշ են: Մյուս կողմից, հայտնի է, որ հարցվողներն առհասարակ ավելի ազատ են կիսվում ապագա պլաններով (ինչը որևէ պատասխանատվություն չի ենթադրում), քան իրական փաստերով:

Ամենայն հավանականությամբ, միզրանտների սեռատարիքային կառուցվածքը կլինի նույնը, ինչ գրանցվել է 2002-2005 թթ.-երի համար: Արտասահմանում աշխատել պլանավորողների 88.4%-ը տղամարդիկ են, 11.6%-ը՝ կանայք, իսկ միզրանտների մեծամասնությունը (73.5%) կլինի 25-54 տարեկան:

## ***Սշտական էմիզրացիա***

Հարցվողների ընտանիքների անդամների 5.1%-ը ցանկություն ունի մշտական բնակություն հաստատել արտերկրում: Ընդ որում, էմիզրացիայի այս տարատեսակի կանխատեսվող տեմպը (այն մարդկանց տոկոսը, ովքեր ծրագրել են 2005 թ. հեռանալ Հայաստանից) 0.7% է: Տարածելով ստացված տվյալը ընդհանուր բնակչության վրա՝ ստանում ենք 16,000-30,000 մարդ (կամ ՀՀ մշտական բնակչության 0.5-0.9%-ը): Հետևաբար, 2005 թ.-ին աշխատանքային միզրանտները կկազմեն Հայաստանից արտաքին միզրացիոն հոսքի մոտ 87%-ը:

Ի տարբերություն աշխատանքային միզրանտների, նրանք, ովքեր պլանավորել են մեկնել արտերկիլ մշտական բնակության, հիմնականում 45 տարեկանից բարձր տարիքի են (63.8%), և այս խմբում մեծամասնություն են կազմում կանայք (56.7%):

---

## ԱՍՓՈՓԻՉ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

---

### ԱՌԱՋԱՏԱՆՔԱՅԻՆ ԷՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

---

- Հետազոտության արդյունքները ՀՀ 778,667 տնային տնտեսությունների վրա տարածելիս ստացվում է, որ 2002-2005 թթ. աշխատանքային միգրացիայի գործընթացին մասնակցած տնային տնտեսությունների բացարձակ թիվը կազմում է 95,000-122,000 կամ ընդհանուր տնային տնտեսությունների 12.2-15.6%-ը: Դեպքերի ճնշող մեծամասնությունում (78%) ընտանիքի անդամներից միայն մեկն է մեկնել արտասահման աշխատելու: Ընտանիքների 15.4%-ը ունեցել է 2 աշխատանքային միգրանտ և միայն 6.6%-ն է ունեցել 3 կամ ավելի միգրանտ:
- Հետազոտության արդյունքների համաձայն, վերջին երեք տարիների ընթացքում Հայաստանից մեկնած աշխատանքային միգրանտների բացարձակ թիվը կազմում է 116,000 – 147,000 մարդ կամ ՀՀ մշտական բնակչության 3.6-4.6%-ը: Այլ կերպ ասած, 2002-2005 թթ. աշխատանքային միգրացիայի գործընթացում ներգրավված է եղել Հայաստանի տնտեսապես ակտիվ բնակչության 7.3 - 9.2 %-ը: Արդյունքները թույլ են տալիս ենթադրել, որ անցած երեք տարիների ընթացքում Հայաստանից մեկնած միգրանտներից 73,500-93,000-ը (2005թ.-ի մարտ ամսվա դրությամբ) վերադարձել էին, իսկ 42,500-53,800-ը գտնվում էին արտերկրում:
- Աշխատանքային միգրացիայում տնային տնտեսությունների ներգրավվածության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Շիրակուն և Լոռիում, որտեղ համապատասխանաբար յուրաքանչյուր երրորդ և յուրաքանչյուր հինգերորդ տնային տնտեսություն ներառված է աշխատանքային միգրացիայի գործընթացում: Միգրացիոն միջին ակտիվություն է գրանցվել Գեղարքունիքում, Կոտայքում, Արարատում, Վայոց Ձորում և Երևանում, իսկ ամենացածրը՝ Արագածոտնում, Սյունիքում, Տավուշում և Արմավիրում: Սակայն ըստ միգրացիայի փաստացի ակտիվության (բնակչության ընդհանուր թվի մեջ աշխատանքային միգրանտների տոկոսի) մարզերի դասավորությունը միանգամայն այլ է: Այլ մարզերի համեմատ միգրացիայի ամենաբարձր տեսնպէ արձանագրվել է Շիրակում, Լոռիում, Երևանում, Գեղարքունիքում և Կոտայքում:

- Հետազոտությունն արձանագրել է, որ քաղաքներից աշխատանքային էմիգրացիայի տեսակը գրեթե երկու անգամ բարձր է, քան զյուղերից: Ընդ որում, միգրացիոն ամենաբարձր ակտիվությունը գրանցվել է Լոռու, Գեղարքունիքի և Շիրակի քաղաքային բնակավայրերում, իսկ ամենացածրը՝ Արմավիրի գյուղական համայնքներում:

## **ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ**

---

- Աշխատանքային միգրանտների կողմից ամենահաճախ ընտրվող ուղևորության երկիրը եղել և մնում է Ռուսաստանը. վերջին երեք տարիների ընթացքում առնվազը մեկ անգամ այս երկիր է այցելել հարցված աշխատանքային միգրանտների 87.6%-ը: Եթե վերածենք այս տվյալը բացարձակ թվի, կստանանք, որ 2002-2005 թթ. ընթացքում ՀՀ 87,600-143,600 քաղաքացի մեկնել է աշխատելու Ռուսաստանի Դաշնությունում:
- Ընդհանուր առմամբ աշխատանքային միգրանտների 90.1%-ը աշխատել է ԱՊՀ երկրներում, ներառյալ (քացի Ռուսաստանից) Ուկրաինան (2.2%) և Ղազախստանը (0.3%): Մոտ 12,000 աշխատանքային միգրանտ մեկնել է ԵՄ երկրներ (հիմնականում Ֆրանսիա) և ԱՄՆ:

## **ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

---

- Ըստ հետազոտության արդյունքների, աշխատանքային միգրանտների 85.9%-ը տղամարդիկ են, իսկ 14.1%-ը՝ կանայք: Ընդ որում, տղամարդ միգրանտների տոկոսը ՀՀ 15 տարեկանից բարձր արական բնակչության մեջ կազմում է 9.2%, մինդեռ կանանց դեպքում այն 7 անգամ փոքր է (1.3%): Այս արդյունքների տարածումն ընդհանուր բնակչության վրա, թույլ է տալիս գնահատել տղամարդ և կին միգրանտների բացարձակ թիվը 2002-2005 թթ.: 92,000-118,000 տղամարդ և 11,300-22,300 կին: Եթե այս թիվը տարածենք ոչ թե ողջ բնակչության, այլ միայն նրա տնտեսապես ակտիվ հասվածի վրա, ապա կստանանք, որ աշխատանքային միգրանտ է տնտեսապես ակտիվ տղամարդկանց 10.9-14.0%-ը և կանանց 1.5-3.0%-ը:
- Աշխատանքային միգրանտների ճնշող մեծամասնությունը 21-50 տարեկան է: Ընդ որում մեծամասնություն են կազմում 41-50 տարեկանները: Վերլուծությունը ցույց է տալիս միգրացիոն ակտիվության հաստատուն աճ՝ սկսած 21 տարեկանից, որն իր գագաթնակետին է հասնում 46-50 տարիքային խմբում: Այս տարիքի յուրաքանչյուր վեցերորդ հայ վերջին երեք տարիների ընթացքում ներառված է եղել աշխատանքային միգրացիայի գործընթացում: 51 տարեկանից հետո՝

գրեթե բոլոր հաջորդող տարիքային խմբերում, միզրանտների տոկոսը երկու անգամ նվազում է:

- Միզրանտների ճնշող մեծամասնությունն ամուսնացած է և դեպքերի մեծամասնությունում միզրանտը կամ ընտանիքի գլխավորն է (տղամարդ) կամ նրա որդին:
- Աշխատանքային միզրանտների մեծամասնությունն ունի միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն: Միզրանտների մոտ 1/5-ն ունի բարձրագույն կամ հետքուհական կրթություն:

## ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԿԱՄՈՒՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

- Աշխատանքային միզրանտների մոտավորապես կեսը, նախքան իրենց առաջին ուղևորությունն արտասահման, ներառված է եղել եկամտաքեր գործունեության մեջ: Ընդ որում, նրանց 64.6%-ն ունեցել է մշտական աշխատանք, իսկ 35.4%-ը՝ պատահական աշխատանք: Սա թույլ է տալիս ենթադրել, որ յուրաքանչյուր երկրորդ աշխատանքային միզրանտի դեպքում աշխատանքային միզրացիան պայմանավորված չի եղել աշխատատեղի բացակայությամբ:
- Հարցման համաձայն՝ միզրանտների 80.3%-ը, նախքան միզրացիան, Հայաստանում վաստակել է ամսեկան մինչև 100 ԱՄՆ դոլար: Միզրանտների 15.5%-ը ստանում էր ամսեկան 100-200 ԱՄՆ դոլար և միայն 4.2%-ի ամսեկան վաստակել է գերազանցել 200 դոլարը: Միզրանտների հաշվարկված միջին ամսեկան եկամուտը Հայաստանում կազմում էր 97.5 ԱՄՆ դոլար:

## ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՈՒՄ

- Միզրանտներից քչերն են նախքան արտասահման մեկնելը կոնկրետ պայմանավորվածություն ունեցել աշխատանքի բնույթի, վարձատրության չափի և կացարանային պայմանների վերաբերյալ: Յուրաքանչյուր երկրորդ միզրանտ պատկերացում չի ունեցել աշխատավարձի մասին, յուրաքանչյուր երրորդը չի իմացել, թե ինչպիսի աշխատանք պետք է կատարի և յուրաքանչյուր չորրորդը պայմանավորվածություն ձեռք չի բերել անգամ կացարանային պայմանների վերաբերյալ:
- Հետազոտության արդյունքները թույլ են տալիս փաստել, որ աշխատանքային միզրացիան հիմնականում սեղոնային երևույթ է: Միզրանտների մեծամասնությունը երկրից հեռանում է գաղնան սկզբին կամ վերջին և վերադառնում է Հայաստան աշնան վերջին կամ ձմռան սկզբին:

- Աշխատանքի և աշխատավարձի մասին սահմանափակ ինֆորմացիայի պատճառով, միգրանտների զգալի մասը (40.3%) ընդհանրապես չէր պլանավորել վերջին աշխատանքային ուղևորության տևողությունը: Նրանք, ովքեր կարողացել են կանխատեսել իրադրությունը, հիմնականում պլանավորել էին մնալ ուղևորության երկրում 6-12 ամիս: Փորբարիվ են այն միգրանտները, ովքեր պլանավորել էին երկրում մնալ 3 ամսից պակաս կամ 1 տարուց ավել: Ստացված տեղեկություններով կարող ենք մոտարկել, որ ուղևորության միջին պլանավորված տևողությունը 8 ամիս է եղել, իսկ փաստացի տևողությունը՝ փոքր-ինչ ավելի երկար՝ 9 ամիս:

#### **ԶԲԱԴՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՒՄ**

---

- Միգրանտների մեծամասնությունն սկսել է աշխատել գրեթե անմիջապես կամ երկիր ժամանելուն հաջորդող 30 օրվա ընթացքում: Միգրանտների 9.1%-ը աշխատանք է գտել 1-3 ամսում և միայն 2.9% դեպքերում աշխատանքի տեղավորվելը պահանջել է ավելի երկար ժամանակ:
- Ուղևորության երկրում միգրանտների աշխատանքը մեծամասամբ պատահական բնույթ է կրել: Աշխատանքային միգրանտների զբաղվածության ամենատարածված դլորտը շինարարությունն է՝ 2/3-ը աշխատում էին այս բնագավառում: Հաջորդ, թեև 6 անգամ ավելի հազվադեպ նշված դլորտներն են առևտուրը, հասարակական սնունդը և ծառայությունները:
- Միգրանտների աշխատանքային օրվա միջին տևողությունը 10.5 ժամ է: Միգրանտների մեծամասնությունն աշխատել է լրիվ աշխատանքային դրույքով (8-10 ժամ), կամ 12-ժամյա հերթափոխով, 5.6%-ը աշխատել է ոչ լրիվ դրույքով (1-7 ժամ) իսկ 8.0%-ը՝ օրական 12 ժամից ավելի: Աշխատանքային միգրանտներից միայն 43.9%-ն է ունեցել կանոնավոր հանգստյան օրեր: 22.5%-ին հանգստյան օրեր են տրամադրել հազվադեպ, իսկ յուրաքանչյուր չորրորդ միգրանտ ընդհանրապես հանգստյան օր չի ունեցել:
- Աշխատանքային միգրանտների միայն 11.5%-ն է գործառուների հետ գրավոր պայմանագիր կնքել, իսկ ճնշող մեծամասնության դեպքում (72.3%) գործառուների հետ հարաբերությունները հիմնված են եղել բանավոր պայմանավորվածության վրա: Ավելին, միգրանտների 11.9%-ը խստովանել է, որ աշխատանքային հարաբերությունները ոչ մի ձևով կանոնակարգված չեն եղել (նույնիսկ բանավոր համաձայնությամբ), և հետևաբար կողմերը միմյանց հանդեպ որևէ պարտավորություններ չունեին:

- Ուղևորության երկրում միգրանտների միջին ամսեկան եկամուտը կազմել է 410 ԱՄՆ դոլար, ընդորում, նվազագույնը 100 և առավելագույնը՝ 1500 դոլար:

## ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

---

- Հարցվողների 18.8%-ը հավաստում է, որ իրենց միգրանտ հարազատները երբեք տնային տնտեսությանը գումար չեն ուղարկել: Այն միգրանտների մեծամասնությունը, ովքեր իրենց ընտանիքին ֆինանսապես աջակցելու ուղիներ այնուամենայնիվ գտել են, իրենց վերջին այցի ընթացքում գումար են ուղարկել 2-6 անգամ:
- Միգրանտների մեծամասնությունը (70.9%) առաջին անգամ կարողացել է ընտանիքին գումար ուղարկել մեկնելուց հետո 2 ամսվա ընթացքում: Յուրաքանչյուր իինգերորդ միգրանտ իր առաջին տնտեսումն ուղարկել է 3-6 ամսվա ընթացքում և միգրանտների միայն 4.6%-ն է առաջին անգամ դրամական փոխանցում կատարել ավելի քան 6 ամսից հետո: Հարցման արդյունքում գրանցված միջին ժամանակահատվածը 2.4 ամիս է:
- Դրամական փոխանցումների ամենատարածված եղանակը քանկային փոխանցումն էք. արտասահման իրենց վերջին ուղևորության ընթացքում միգրանտների 84.8%-ը օգտվել է քանկային ծառայություններից: Ի հակակշիռ՝ տնային տնտեսությունների միայն 21.0%-ն է կանխիկ գումար ստացել այլ անձանց միջոցով:
- Հարցման արդյունքերի համաձայն, վերջին ուղևորությունից յուրաքանչյուր միգրանտի ուղարկած/թերած միջին գումարն ընդհանուր առմամբ կազմել է 1540 ԱՄՆ դոլար:
- Եթե քազմակատկնեաք հաշվարկված 1540 ԱՄՆ դոլարը վերջին 3 տարիների ընթացքում յուրաքանչյուր միգրանտի կատարած ուղևորությունների միջին թվով (1.8), ապա յուրաքանչյուր տնային տնտեսության ստացած միջին եկամուտը կազմել է 2772 ԱՄՆ դոլար: Սա թույլ է տալիս գնահատել 2002-2005 թթ. միջև ընկած ժամանակահատվածում եթե ոչ ճշրիտ, ապա գոնեն նվազագույն ֆինանսական ներհոսքը Հայաստան՝ աշխատանքային միգրացիայի շնորհիվ. 260-330 միլիոն ԱՄՆ դոլար՝ կախված միգրանտների բացարձակ թվից (Հաշված «անհաջող» ուղևորությունների 18.8%-ը), կամ տարեկան միջինում 100 միլիոն ԱՄՆ դոլար:

## **ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՒՄ**

- Հարցվողների կողմից նշված խնդիրները կարելի է բաժանել 3 խմբի. *a)* բյուրոկրատական խնդիրներ (ժամանակավոր գրանցման գործընթաց, ոստիկանության կողմից կաշառքի պահանջ, փաստաթղթերի հաճախակի ստուգում), *b)* խնդիրներ՝ կապված աշխատանքի հետ (աշխատանք գտնելու դժվարություններ, նախապես պայմանագրվածից քիչ վարձատրություն), *c*) պետական մարմինների և տեղի բնակչության բացասական վերաբերմունք:
- 51-65 տարեկան միզրանտների մեծ մասը խնդիրներ է ունեցել կապված աշխատանքի հետ, իսկ ավելի երիտասարդ միզրանտները հաճախակի հանդիպել են բյուրոկրատական խոչընդոտների:

## **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՊԱՏճԱռՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

- Հետազոտության արդյունքները վկայում են, որ աշխատանքային միզրացիայի հիմնական պատճառները Հայաստանում աշխատանքի հետ կապված հիմնախնդիրներն են (96.9%): Այդ թվում, հարցվողների 51%-ը նշել է աշխատատեղերի բացակայությունն առհասարակ, 43.0%-ը՝ բարձրար վարձատրվող աշխատատաեղերի պակասը, իսկ 2.9%-ը՝ իրենց մասնագիտությամբ աշխատատեղերի բացակայությունը:
- Հարցվողների մեծամասնությունը կարծում է, որ իրենց ընտանիքի անդամների ժամանակավոր աշխատանքն արտասահմանում դրականորեն է անդրադառնում ընտանիքի ֆինանսական և բարոյահոգեբանական մթնոլորտի վրա: Փոքր-ինչ բացասական է հասարակական կապերի վրա ազդեցությունը, սակայն ընտանիքի կառուցվածքի վրա աշխատանքային միզրացիան ոչ մի ազդեցություն չունի:

## **ՆԵՐՁԻՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊՈՏԵՆՑԻԱԼԸ (ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 2005 Թ.-Ի ՀԱՄԱՐ)**

- Հետազոտված տնային տնտեսությունների անդամների 5.1%-ը կցանկանային փոխել իրենց ներկայիս բնակավայրը՝ ՀՀ-ի մեկ այլ բնկավայրում, հիմնականում Երևանում (3.0%), ապրելու և աշխատելու համար: Տնային տնտեսությունների անդամների 1.3%-ը ծրագրել է տեղափոխվել արդեն իսկ 2005 թ.-ին, ընդորում նրանց գրեթե կեսը (0.6%) տեղափոխվելու է Երևան: Բացարձակ թվի վերածելով՝ սա նշանակում է, որ Հայաստանի շրջանների մոտավորապես 13,000 բնակիչներ այս տարի ամենայն հավանականությամբ կհաստատվեն Երևանում: Հստ հարցման արդյունքների, միզրացիոն հոսքը դեպի Երևան հիմնականում կձևավորեն մայրաքաղաքին մոտ գտնվող շրջանների՝ Արագածոտնի,

Արարատի և Կոտայքի բնակիչները (66.7%), իսկ ավելի փոքր մաս կկազմեն աղետի գոտու՝ Լոռու և Շիրակի բնակիչները (33.3%):

#### **ԱՐՏԱԶԲՆ ՄԻԳՐԱՑՈՆ ՊՈՏԵՆՑԻԱԼԸ (ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 2005 Թ.-Ի ՀԱՄԱՐ)**

---

- Ընդհանուր առմամբ, ըստ մեր կանխատեսումների, 2005 թ.-ին հանրապետությունից՝ արտասահմանում իրենց բախտը փորձելու նպատակով կմեկնի 105,000-140,000 աշխատանքային միգրանտ (ՀՀ մշտական բնակչության 3.3-4.3%-ը): Բացի այդ, ՀՀ մշտական բնակչության 0.5-0.9%-ը (կամ 6,000-30,000 մարդ) ծրագրում է արտերկիր մեկնել մշտական բնակության: Այսպիսով, աշխատանքային միգրանտները կկազմեն արտաքին միգրացիոն հոսքի 87%-ը:
- Ամենայն հավանականությամբ, միգրանտների սեռատարիքային կառուցվածքը կլինի նոյնը, ինչ զրանցվել է 2002-2005 թթ.-երին: Արտասահմանում աշխատել պլանավորողների 88.4%-ը տղամարդիկ են, 11.6%-ը՝ կանայք: Միգրանտների մեծամասնությունը (73.5%) կլինի 25-54 տարեկան: Ի տարբերություն աշխատանքային միգրանտների, մշտական բնակության մեկնողների տարիքը հիմնականում 45-ից քարձու է, և նրանց մեծամասնությունը կանայք են:

## **ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**Աննա Սիմասյանը**, սոցիոլոգիայի և կոնֆլիկտաբանության մագիստրոս, մասնագիտանում է սոցիոլոգիական հետազոտությունների և սոցիալական ճարտարագիտության բնագավառներում: Նրա մասնագիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հասարակական կառուցվածքի և դժմամիկայի, հասարակական արժեքների և վերաբերմունքի, ինչպես նաև միջազգային հարաբերությունների հիմնահարցերը: Ա. Սիմասյանը, Առաջարեն սոցիալական տեխնոլոգիաներեւ ՀԿ հիմնադիրներից մեկն է և ներկայիս նախագահը:

**Բլանկա Հանչիլովան**, միջազգային հարաբերությունների գծով գիտությունների բեկնածու, մասնագիտանում է կիրառական հետազոտությունների բնագավառում: Նրա մասնագիտական փորձը ներառում է հետկոնֆլիկտային տրանսֆորմացիայի, անվտանգության, ժողովրդավարացման և անցումային շրջանի հիմնախնդիրները: Նա աշխատել է Պրահայի Սիջազգային հարաբերությունների ինստիտուտում, իսկ այժմ՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ժողովրդավարացման ծրագրի պատասխանատուն է:

## **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԷՄԻԳՐԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 2002-2005 Թ-Թ.**

ՏԱՐԱԾՈՒՅԹ ՏԱՐԱԾՈՒՅԹ ՏԱՐԱԾՈՒՅԹ

**Աննա Սիմասյան, Բլանկա Հանչիլովա**